Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
Կոալիցիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

Արդյունքներ

Դեկտեմբեր, 2021

Բովանդակություն

Բովանդակություն 2

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ա. Մոնիթորինգի նպատակներ 9

բ. Գնահատման մեթոդներ 10

ՈԼՈՐՏ 1: ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 14

Գործողություն 1: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում 15

Գործողություն 2: Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում 17

Գործողություն 3: Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում .. 18

Գործողություն 4: ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծում 20

Գործողություն 5: Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում 21

Գործողություն 6: Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում 23

ՈԼՈՐՏ 2: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 26

Գործողություն 7: 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում և իրականացում 27

Գործողություն 8: Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա պետական մարմիններում հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերի մշակում և իրականացում 29

ՈԼՈՐՏ 2.1: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (Բարեվարքություն) 31

Գործողություն 9: Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում 32

Գործողություն 10: «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում 34

Գործողություն 11: «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում 35

Գործողություն 12: Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխում 37

Գործողություն 13: «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների սահմանում 39

Գործողություն 14: Պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնների սահմանում..... 40

Գործողություն 15: Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում 41

ՈԼՈՐՏ 2.2: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 43

(հայտարարագրում, նվերներ, կարգավորման ազդեցության գնահատում, գնումներ, մասնավոր ոլորտ, իրական սեփականատերեր, տնտեսական մրցակցության պաշտպանություն) 43

Գործողություն 16: Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում 44

Գործողություն 17: Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում: Ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում..... 45

Գործողություն 18: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցում 46

Գործողություն 19: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում, նվերների ռեեստրի ստեղծում..... 47

Գործողություն 20: Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման սահմանում, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկության ապահովում 48

Գործողություն 21: Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցում և դրանցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիքակազմի ներդրում՝ այդ թվում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում..... 49

Գործողություն 22: Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում 50

Գործողություն 23: Գնումների ոլորտի բարելավում 51

Գործողություն 24: Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրում 52

Գործողություն 25: Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում..... 53

ՈԼՈՐՏ 2.3: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 54

(էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրում, պետական կառավարման գործընթացին հասարակության մասնակցության մեխանիզմների ներդրում և կատարելագործում, վարչարարության պարզեցում) 54

Գործողություն 26: Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի ներդրում 55

Գործողություն 27: Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում 56

Գործողություն 28: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում 57

Գործողություն 29: Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացում և e-gov.am-ի շրջանակներում էլեկտրոնային հարթակի ներդրում . 61

Գործողություն 30: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծում 62

Գործողություն 31: Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում. 63

ՈԼՈՐՏ 3: ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 65

Գործողություն 33: ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում 66

Գործողություն 34: Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում 67

Գործողություն 35: Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում 68

Գործողություն 36: Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով 69

Գործողություն 37: Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում 70

Գործողություն 38: Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում 70

Գործողություն 39: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում 71

Գործողություն 40: Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում 73

Գործողություն 41: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում 74

ՈԼՈՐՏ 4: ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 76

Գործողություն 42: Հանրային իրազեկման տարեկան արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում 77

Գործողություն 43: «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում 78

Գործողություն 44: Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում 80

Գործողություն 45: Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության, «Մարդու իրավունքներ» թեմայով 80

Գործողություն 46: Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում 82

Գործողություն 47: Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում 82

ՈԼՈՐՏ 5: ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ 84

Գործողություն 48: Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում 85

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 87

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 89

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱԺ	Ազգային ժողով
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԲՏԱ	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳՐԵԿՈ	ԵԽ Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբ
ԵՄ	Եվրոպական միություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԷԿԵՆԳ	Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ
ԻՀԱ	Իրավաբանների հայկական ասոցիացիա
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԿԳՄՍ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿԿ	Հակակոռուպցիոն կոմիտե
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՃՈ	Ճանապարհային ոստիկանություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազակերպություն
ՄՊՀ	Մրցակցության պաշտպանության հանձնաժողով
ՀՔԾ	Հատուկ քննչական ծառայություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՔԿ	Քննչական կոմիտե
ՕՀՄ	Օպերատիվ-հետախուզական միջոցառում
ՖԽՔ	Ֆոկուս խմբային քննարկում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերի 3-ին հաստատեց «ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը» (այսուհետ նաև՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն և Միջոցառումների կամ Գործողությունների ծրագիր): Հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ Կառավարության հռչակած հայեցակարգային կանխադրույթների ու սկզբունքների հետևողական կենսագործումն է, այդ թվում՝ կոռուպցիան ծնող պատճառների վերհանումը և դրանց վերացումը, կոռուպցիայի նկատմամբ հասարակության և հանրային ծառայողների անհանդուրժողական վերաբերմունքի սերմանումը և տարածումը, կոռուպցիայի համատարած և շարունակական նվազեցումը:

Ռազմավարությունը նախատեսում է 48 միջոցառում, որոնցից 2-ի կատարման ժամկետները ավարտվել են (մեկը նախատեսված էր՝ 2019, մյուսը՝ 2020 թվականին), իսկ մնացյալ 46-ը ենթակա են պարբերական կատարման մինչև 2022թ.:

Գործողությունները բաժանված են երեք մեծ խմբերում, բովանդակային առումով ընդգրկում են կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնասյուները. կոռուպցիայի կանխարգելում, հակակոռուպցիոն կրթություն, կոռուպցիոն գործերի քննություն (պատժի անխուսափելիություն): Մշտադիտարկման արդյունքները ցույց տվեցին, որ թեև կան գործողություններ, որոնք ձևական առումով գնահատվում են ամբողջովին, մասնակի կամ մեծամասամբ կատարված, բայց դրանք բովանդակային առումով ունեն որակական խնդիրներ:

Ներառական ռազմավարություն ունենալու անհրաժեշտությունից ելնելով՝ Հակակոռուպցիոն ռազմավարությունը հատուկ կարևորում է հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման գործընթացին քաղաքացիական հասարակության և քաղաքացիների ակտիվ ներգրավվածությունը և հանրային վերահսկողության անհրաժեշտությունը: Այս կապակցությամբ Հակակոռուպցիոն ռազմավարությունը նախատեսում է միջոցառումների իրականացման նկատմամբ մշտադիտարկում՝ ինչպես պետության, այնպես էլ հասարակական կազմակերպությունների կողմից: Ի կատարումն Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 48-րդ կետով սահմանված գործողության[1]՝ Իրավաբանների հայկական ասոցիացիան և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան սույն զեկույցի շրջանակներում ներկայացնում են ՀՀ **Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառման ծրագրի 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում 2021 թվականին կատարման ենթակա գործողությունների մոնիթորինգի արդյունքները:** Մոնիթորինգի հիմնական նպատակն է՝ Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի իրականացման ընթացիկ իրավիճակի և արձանագրված առաջընթացի գնահատումը՝ քանակական և որակական տեսանկյունից: Մոնիթորինգի իրականացման համար ուսումնասիրվել են հասանելի փաստաթղթերը, պաշտոնական տեղեկությունները և հաշվետվությունները, մոնիթորինգային զեկույցները,

[1] Գործողությունը ներառում է՝ կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում:

ինչպես նաև իրականացվել է ֆոկուս խմբային քննարկում մասնագիտացված ՔՀԿ-ների, փաստաբանների ու ոլորտային փորձագետների շրջանում: Մոնիթորինգի աշխատանքներն իրականացվել են 2021 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, իսկ զեկույցը մշակվել է նույն թվականի դեկտեմբերի ամսվա ընթացքում:

Նշենք, որ զեկույցը հանդիսանում է Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի մշտադիտարկման թվով երկրորդ զեկույցը: Առաջինը՝ ԻՀԱ-ի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից 2021 թվականի մարտի ամսին հրապարակված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 2019-2020 թվականներին կատարման ենթակա միջոցառումների մշտադիտարկման արդյունքների զեկույցն էր (այսուհետ՝ 2019-2020 թվականների մշտադիտարկման արդյունքների զեկույց):[2] Հասարակական մշտադիտարկման այս գործիքը ապահովվում է շարունակական հանրային վերահսկողությունը և մոնիթորինգը:

[2] ԻՀԱ-ի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից 2021 թվականի մարտի ամսին հրապարակված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 2019-2020 թվականներին կատարման ենթակա միջոցառումների մշտադիտարկման արդյունքների զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ. https://armla.am/48655.html:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Մոնիթորինգի նպատակներ

Մոնիթորինգի նպատակներն են՝ 1) իրականացնել ուսումնասիրություն՝ պարզելու իրավասու մարմինների կողմից իրականացված Միջոցառումների ծրագրի կատարման ընթացքը և դրանց բովանդակությունը (առաջընթացը), 2) գնահատել կատարված աշխատանքներով փաստացի և ակնկալվող արդյունքը և պարզել կատարված փոփոխությունների ազդեցությունը, 3) գնահատել Միջոցառումների ծրագրի իրականացման գործընթացը ընտրված թիրախային ոլորտների համար՝ գործողությունների իրականացման որակական տեսանկյունից, 4) պարզել շահագրգիռ անձանց և քաղաքացիական հասարակության մասնակցությունը միջոցառումների իրականացմանը, հանրային քննարկումներին:

Մշտադիտարկման ընթացքում համադրվել են յուրաքանչյուր միջոցառման շրջանակներում իրականացված աշխատանքները և այդ միջոցառման համար 2021 թվականին ակնկալվող արդյունքները և վերստուգիչ ցուցանիշները՝ ըստ կատարված աշխատանքների: Այս մեթոդոլոգիան հնարավորություն է տվել գնահատելու հնարավոր շեղումները և դրանց պատճառները, ձեռք բերված առաջընթացը և միջոցառման կատարման կարգավիճակը:

Այն դեպքում, երբ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ կոնկրետ միջոցառումների համար նախատեսված չեն եղել վերստուգիչ ցուցանիշներ, ապա գնահատումը իրականացվել է ակնկալվող և փաստացի արդյունքի համադրման և վերլուծության հիման վրա, որը այդուհանդերձ, մեր գնահատմամբ, ամբողջությամբ չի արտահայտել միջոցառման իրականացմամբ գրանցած առաջընթացն ու ձեռք բերած արդյունքը: Իսկ այն դեպքում, երբ Հակակոռուպցիոն ռազմավարությամբ կոնկրետ միջոցառումների համար կատարման ժամկետները նախատեսված են ընթացիկ տարվա ոչ թե առաջին, այլ երկրորդ կիսամյակում, ապա գնահատումը իրականացվել է ակնկալվող արդյունքի և հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքների համադրման և վերլուծության հիման վրա: Հասկանալու համար, թե որոնք են այդ միջոցառումները, յուրաքանչյուր գործողության երկրորդ սյունակում նշված է թե գործողությունը 2021 թվականի կոնկրետ որ կիսամյակում կամ եռամսյակում պետք է իրականացվի: Կան գործողություններ, որոնք պետք է իրականացվեն 2021 թվականի ընթացքում՝ առանց հստակ ժամկետի ամրագրման:

Այսպիսով, **սույն զեկույցի շրջանակներում առանձնացվել են Միջոցառումների ծրագրով սահմանված 2021 թվականի գործողությունները և գնահատվել են այդ գործողությունների կատարման ընթացքը առաջին կիսամյակում:**

Մշտադիտարկումն իրականացվել է երկու եղանակով՝ քանակական և որակական:

Միջոցառումների ծրագրով սահմանված աշխատանքների իրականացման (առաջընթացի) մշտադիտարկման արդյունքը արտահայտվում է հետևյալ վարկանիշային ցուցանիշներից որևէ մեկով.

1) կատարված է (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են).
2) կատարված է մեծամասամբ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված աշխատանքների կեսը կամ կեսից ավելին են կատարվել).

3) կատարված է մասնակի (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված որոշ աշխատանքներ կատարվել են, սակայն դրանք չեն գերազանցում նախատեսված աշխատանքների կեսը).

4) կատարված չէ (դիտարկվող ժամանակահատվածի համար միջոցառմամբ նախատեսված որևէ աշխատանք իրականացված չէ):

Զեկույցի եզրափակիչ մասում ամփոփվում են մշտադիտարկման ու գնահատման արդյունքները և ներկայացվում են մեթոդական և բովանդակային առաջարկներ՝ վեր հանված խնդիրների և մարտահրավերների լուծման նպատակով:

բ. Գնահատման մեթոդներ

Հետազոտական նպատակներին հասնելու համար կիրառվել է **մեթոդների համադրման մոտեցումը՝** համադրելով որակական և քանակական տվյալները: Տվյալները հավաքագրվել են առաջնային և երկրորդային աղբյուրներից: Հետազոտության մեթոդները ներառում են գրասենյակային ուսումնասիրությունը/փաստաթղթերի վերլուծությունը, այդ թվում Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների կատարման համար պատասխանատու մարմինների կողմից ներկայացրած հաշվետվությունները, և ֆոկուս խմբային քննարկումները շահագրգիռ կողմերի հետ: Սույն զեկույցում վերլուծվել և ներառվել են նաև իրավասու պետական մարմինների կողմից զեկույցի նախագծին ներկայացրած դիտարկումները և առաջարկությունները: Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2021 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Հաշվի առնելով համաճարակային իրավիճակը երկրում՝ տեղում դեմ առ դեմ ՖԽՔ-ներ չեն իրականացվել, այլ քննարկումներն իրականացվել են առցանց՝ «Zoom» հարթակի կիրառմամբ: Հետազոտության առանձին մեթոդները ներկայացված են ստորև.

Գրասենյակային ուսումնասիրություն/փաստաթղթերի վերլուծություն: 2021 թվականի ընթացքում իրականացվելիք գործողությունների քանակական և ընթացակարգային ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է գրասենյակային ուսումնասիրության/փաստաթղթերի վերլուծության, այդ թվում Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 2021 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ պետական մարմինների ներկայացրած հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)[3] ուսումնասիրության միջոցով: Զեկույցում ներառվել են նաև զեկույցի նախագծի վերաբերյալ իրավասու պետական մարմինների կողմից ներկայացրած դիտարկումները ու առաջարկությունները: Այս մեթոդների միջոցով տեղեկատվություն է հավաքագրվել **ելքային մակարդակի ցուցանիշների** վերաբերյալ:

[3] Տե՛ս ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1332-ն որոշմամբ 2021 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը: Հասանելի է հետևյալ հղմամբ.
https://moj.am/storage/files/pages/pg_2607683989861_Hashvetvutyun_2021_final.pdf:

Աղյուսակ 1. Զեկույցի մշակման աշխատանքներում ներգրավված իրավասու մարմինները և համագործակցության բնույթը

Մեթոդ	Թիրախային իրավասու մարմինները	Դիտարկումներ և առաջարկություններ ներկայացրած մարմինները և քանակը	Մարմինները, որոնք չեն ունեցել դիտարկումներ և առաջարկություններ	Առհասարակ չարձագանքած մարմինները	Դիտարկումներ և առաջարկությունների քանակը
Զեկույցի նախագծի վերաբերյալ դիտարկումների և առաջարկությունների հավաքագրում	Ներգրավված են եղել Հակակոռուպցիոն ռազմավարության 2021թ-ի գործողությունների կատարմանը	ՀՀ ԱՆ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն ԿԿՀ, Գլխավոր դատախազություն, Էկենգ ՓԲԸ, ՄՊՀ, Քաղաքացիական ծառայության գրասենյակ, ՔԿ ՀՀ ոստիկանություն	ՀԿԿ, Արդարադատության ակադեմիա, ՀՀ ԲՏԱ նախարարություն ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ԲԴԽ ԿԸՀ	ԱԺ, Վարչապետի աշխատակազմ, ՄԻՊ, ՀՀ ԱԱԾ, ՀՀ ԿԲ, ՀՀ ՀՔԾ,	58
Ընդհանուր քանակը	22	10	6	6	58

Ֆոկուս խմբային քննարկումներ: **<u>Արդյունքային մակարդակի ցուցանիշները</u>** գնահատվել են հետազոտական որակական մեթոդների միջոցով, մասնավորապես, ՖՔԽ-ների միջոցով: Այս ցուցանիշները ներառում են այն գործողությունները, որոնք իրականացվել են **<u>2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում</u>**, քանի որ միայն այդ ավարտված գործողությունների համար է հնարավոր ստանալ ազդեցության մակարդակի որոշ գնահատականներ:

Հաշի առնելով այն հանգամանքը, որ հաշվետվության շրջանակներում պետական իրավասու մարմինները մանրամասն ներկայացրել են միջոցառումների կատարման ուղղությամբ իրականացված գործողությունները, ուստիև ՖԽՔ իրականացվել է մասնագիտացված ՔՀԿ-ների ներկայացուցիչների, փաստաբանների և ոլորտային փորձագետների հետ: Ընդհանուր թվով իրականացվել է 1 ՖԽՔ: Միևնույն ժամանակ, բոլոր այն պետական իրավասու մարմիններին, որոնք ներգրավված են Հակակոռուպցիոն ռազմավարության 2021 թվականի ընթացքում իրականացման ենթակա գործողությունների պատասխանատու մարմինների ցանկում, ուղարկվել է սույն զեկույցի նախագիծը և առաջարկվել է նախագծի վերաբերյալ դիտարկումներ և առաջարկություններ ունենալու դեպքում դրանք գրավոր ներկայացնել:Ներկայացրած դիտարկումներն ու առաջարկությունները ամփոփվել են և ներառվել են զեկույցում:

Աղյուսակ 2. Իրականացված ՖԽՔ-ի վերաբերյալ տեղեկատվություն

Մեթոդ	Քանակ	Թիրախային խումբ	Մասնակիցների թիվ
Ֆոկուս խմբային քննարկում	1	Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ, փաստաբաններ, ոլորտային փորձագետներ	17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՈԼՈՐՏ 1: ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

	2021թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	6
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	1[4]
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	4[5]
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	1

[4] Գործողության գնահատումը կատարված է վերապահումով:
[5] 1 գործողության գնահատումը կատարված է վերապահումով:

Գործողություն 1: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
1	Հանձնաժողովի գործառույթների շրջանակների ընդլայնման վերաբերյալ օրենսդրական փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Աշխատակազմի հաստիքների թիվն ավելացել է:	ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է առանձին տող՝ հատկացված Հանձնաժողովի ֆինանսավորմանը: ԿԿՀ Հանձնաժողովի լիազորությունների արդյունավետությունը բարելավվող օրենսդրական փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով (2021):	ՀՀ արդարադատության նախարարություն Վարչապետի աշխատակազմ ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)	Հանձնաժողովի գործառույթների շրջանակներն ընդլայնվել են: Աշխատակազմի հաստիքների թիվն ավելացել է, 40-ից դառնալով 53: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

ՀՀ ԱԺ-ի կողմից 2021 թվականի հունվարի 19-ին ընդունվել է ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքների փաթեթը: Նշյալ փաթեթով փոփոխություն է կատարվել նաև «ԿԿՀ-ի մասին» օրենքում և վերանայվել է ԿԿՀ-ի լիազորությունների շրջանակը: Մասնավորապես, հայտարարատուի կողմից փաստացի գույքի տիրապետման, ինչպես նաև հայտարարատուի՝ իրական շահառու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար ԿԿՀ-ն իրավասու է դիմել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին և ստանալ անհրաժեշտ տեղեկություններ: ԿԿՀ-ին նաև տրվել է իրավասություն հայտարարատուի պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում, նրա գույքի էական փոփոխության կասկածի դեպքում նրանից պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր: Բարեվարքության ուսումնասիրության շրջանակներում հստակեցվել է ԿԿՀ-ին տրված, անձի՝ քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն իրականացնելու լիազորությունը: ԿԿՀ-ն վերոնշյալի համատեքստում իրավասու է դիմել ՕՀԳ իրականացնող մարմիններին և ստանալ տեղեկություններ:

Ի լրումն վերոգրյալի, 2020 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունվել և 2021 թվականի հունվարի 20-ից ուժի մեջ է մտել ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմնի անդամները պարտավոր են ԿԿՀ ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր: Կատարված փոփոխություններով նախատեսվել են նաև այլ կարգավորումներ: Միաժամանակ պետք է նշել, որ այս օրենքի որոշ հոդվածներ, այդ թվում վերոնշյալը, ուժի մեջ է մտնելու 2022 թվականի հունվարի 1-ից:

Հաշվետու ժամանակահատվածում փոփոխություններ են կատարվել ԿԿՀ-ի հաստիքացուցակում և հաստիքների քանակն ավելացել է 13 նոր հաստիքով՝ նախկին 40-ի փոխարեն՝ դառնալով 53:
Ըստ Հաշվետվության՝ վերոգրյալ իրավական ակտերի մշակման աշխատանքների ընթացքում խորհրդակցություններ են անցկացվել շահագրգիռ պետական մարմինների, ՀԿ-ների ներկայացուցիչների հետ: Այս տեսանկյունից սակայն հարկ է նշել, որ մեկ այլ հարց է, որ նախագծերը ներկայացվում են հանրային քննարկման, և բոլորովին այլ, երբ իրավասու մարմինները հաշվի չեն առնում ՔՀԿ-ների կողմից այդ քննարկումների արդյունքում ներկայացված առաջարկությունները և դիտարկումները:

2021 թվականի նոյեմբերի 23-ին ZOOM առցանց հարթակում ԻՀԱ-ն և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան կազմակերպել են ՖԽՔ, որին մասնակցում էին մեկ տասնյակից ավելի ՔՀԿ-ների ներկայացուցիչներ, փաստաբաններ և ոլորտային փորձագետներ: Մասնակիցները, չնայած վերոնշյալ փոփոխությունների, ներկայացրեցին մտահոգություններ օրենսդրական թերի կարգավորումների և դրանից բխող խնդիրների մասին: Այսպես, ինչպես նշեցինք, ԿԿՀ-ն պաշտոնատար անձանց բարեվարքության ուսումնասիրություն իրականացնելու օրենքով սահմանված իրավասություն ունի: Ի թիվս այլնի, այդ եզրակացությունը ևս նպաստում է որոշում ընդունելու հարցում, երբ ընթանում են նշանակումներ: Այստեղ առաջին խնդիրը կայանում է նրանում, որ դրանք գաղտնի են, և չեն հրապարակվում: Այս խիստ գաղտնիության ռեժիմի դեպքում անհնար է գնահատել այս գործառույթի արդյունավետությունը, իրականացնել արդյունավետ հանրային վերահսկողություն և վերլուծել, թե տրամադրված եզրակացություններից (լինի այն դրական, թե՝ բացասական) քանիսն են հաշվի առնվել որոշումների կայացման ժամանակ և ինչքանով են դրանք ամբողջական տեղեկություններ պարունակում թեկնածուի բարեվարքության վերաբերյալ:
Երկրորդ, բարեվարքության եզրակացությունը գնահատվող թեկնածուին չի տրամադրվում: Մասնավորապես, ԿԿՀ-ի մասին օրենքի 26.1-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը տեղեկատվության ուսումնասիրության և ամփոփման արդյունքում կազմում և **իրավասու մարմին է ներկայացնում** անձի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն: Այս կարգավորման հետևանքն այն է, որ գնահատվող անձը իրեն վերաբերող եզրակացությանը ծանոթ չէ, և այդտեղ կարող են տեղ գտնել տեղեկություններ, որոնք թեկնածուի կողմից ծանոթանալուց հետո լրացուցիչ պարզաբանումների կարիք ունեն հենց թեկնածուի կողմից: Ընդ որում, սա չի վերաբերում ԿԿՀ-ի կողմից պարզաբանումների պահանջելու կարգավորմանը, քանի որ ԿԿՀ-ն պարզաբանում է պահանջում միայն իր մոտ կասկած հարուցող հարցերի վերաբերյալ: Այս խնդիրը, օրինակ՝ առաջ ծագեց, երբ ԱԺ-ում բարեվարքության ստուգման եզրակացությունը քննարկելու ժամանակ, թեկնածուն հայտնեց եզրակացության մեջ տեղ գտած ոչ ճիշտ տեղեկությունների մասին:

Այսպիսով, թեև ձևական առումով գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ (վերապահումով)**, սակայն բովանդակային առումով առկա են լուրջ խնդիրներ:

Գործողություն 2: Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
2	Հակակոռուպցիոն կոմիտեն ձևավորվել է: Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրվել է առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ:	ՀԿ կենտրոնական մարմինն ապահովված է անհրաժեշտ տարածքային, նյութական միջոցներով, աշխատակազմի առնվազն 50-%-ը համալրվել է (2021): Աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումների 40%-ը վերապատրաստվել է 2021թ.-ին, 70%-ը՝ 2022թ.-ին: Պետական բյուջեում և ՄԺԾԾ-ում նախատեսված է ՀԿ-ի ֆինանսավորման առանձին տող 2021-2022թթ.	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ ոստիկանություն ՀՀ ֆինանսների նախարարություն	Իրականացվել են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի ձևավորման և կոմիտեի նախագահի ընտրության գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ միջոցառումներ: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

2021 թվականի մարտի 24-ին ԱԺ-ի կողմից ընդունվել է «ՀԿԿ մասին» օրենքը: Օրենքը կարգավորում է ՀԿԿ-ի լիազորությունները, համակարգը և կառուցվածքը, կազմավորման, գործունեության, ՀԿԿ-ում պաշտոն զբաղեցնելու կարգը և պայմանները, ծառայողների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, պաշտոնավարման հետ կապված մյուս հարաբերությունները: ՀԿԿ հիմնական իրավասությունն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի կազմակերպումը և իրականացումը: Միաժամանակ, քրեական վարույթ նախաձեռնելու հարցի լուծման նպատակով՝ ՀԿԿ-ն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնելու է ՕՀԳ: ՀԿԿ-ի կազմում նշանակումները, այդ թվում՝ ղեկավար կազմի, կատարվում են բաց մրցույթի արդյունքում, որի պարտադիր փուլ է կազմելու ԿԿՀ-ի կողմից թեկնածուների բարեվարքության ուսումնասիրության փուլը: (Բարեվարքության ուսումնասիրության գործիքի հետ կապված խնդրահարույց կետերը ներկայացված են սույն զեկույցի գործողություն 1-ում:)

Ի լրումն, ՀՀ կառավարության կողմից 2021 թվականի հունիսի 3-ին ընդունվել են «Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին» N 895-Ն, «Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի կազմում միջազգային փորձագետների ներգրավման կարգը սահմանելու մասին» N 896-Ն որոշումները, իսկ 2021 թվականի հունիսի 17-ին՝ «Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի թեկնածուի լեզվական գիտելիքների իմացության ստուգման կարգը և անհրաժեշտ մակարդակը սահմանելու մասին» N 989-Ն որոշումը: Իրականացվել են ՀԿԿ նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի ձևավորման և ՀԿԿ նախագահի ընտրության գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ այլ միջոցառումներ:

Ըստ Հաշվետվության՝ վերոգրյալ իրավական ակտերը քննարկվել են շահագրգիռ մարմինների և ՔՀԿ-ների հետ: «ՀԿԿ մասին» օրենքը և հարակից օրենքների փաթեթը ներկայացվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am կայքում, նախագծերի վերաբերյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ: Այդուհանդերձ, պետք է նշել, որ մեկ այլ հարց է, որ նախագծերը ներկայացվում են հանրային քննարկման, և բոլորովին այլ, երբ իրավասու մարմինները հաշվի չեն առնում ՔՀԿ-ների կողմից այդ քննարկումների արդյունքում ներկայացված առաջարկությունները և դիտարկումները:
Նշենք նաև, որ հաշվետու ժամանակահատվածում ՀԿԿ-ն ձևավորված չէր:

Այսպիսով, գործողությունը, որի կատարումը նախատեսված է 2021 թվականին, հաշվետու ժամանակահատվածում գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 3: Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
3	Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանները ձևավորվել են: Ապահովված են բավարար մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներ մասնագիտացված դատարանների գործունեության ապահովման համար:	Դատարանը ձևավորվել է՝ ԲԴԽ ընթացակարգային որոշումներն ընդունվել են (2021թ.-ի 4-րդ եռամսյակ) Մշակվել և հաստատվել են հակակոռուպցիոն մասնագիտացմամբ դատավորների համար	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ) Բարձրագույն դատական խորհուրդ	Ընդունվել են իրավական ակտեր, որոնցով նախատեսված է Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծումը:

		վերապատրաստման ուսումնական ծրագրերը (2021թ.-ի 4-րդ եռամսյակ) Դատավորների կազմի առնվազն 30%-ը նշանակված է ու անցել է համապատասխան վերապատրաստումներ (2021թ.-ի 4-րդ եռամսյակ):	(համաձայնությամբ) Արդարադատության ակադեմիա	Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

ՀՀ ԱԺ-ի կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունվել են ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով նախատեսվում է Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծումը: Դատարանը գործելու է առնվազն 15 դատավորի թվակազմով, որից առնվազն 10-ը պետք է լինեն կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ, իսկ առնվազն 5-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներ: Համապատասխանաբար ավելացվելու է նաև վերաքննիչ և վճռաբեկ դատարանների թվակազմը:
Օրենքով սահմանվում է նաև հակակոռուպցիոն մասնագիտացմամբ դատավորների նշանակման կարգը, պահանջները և սահմանափակումները, միևնույն ժամանակ նախատեսվում է այլ դատավորների համեմատությամբ առավել բարձր վարձատրություն՝ որպես առավել ռիսկային, արտաքին ազդեցության տեսանկյունից խոցելի ոլորտի անկախության և անաչառության ապահովման երաշխիք: Նշված իրավական ակտերով սահմանվում են հակակոռուպցիոն մասնագիտացմամբ դատավորների թեկնածուների ընտրության առանձնահատկությունները, նախատեսվում է հակակոռուպցիոն դատավորների թեկածուների բարեվարքության ստուգման պահանջ:
Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով մասնագիտացված դատական քննությունն ապահովելու նպատակով ՀՀ ԲԴԽ-ի 2021 թվականի ապրիլի 1-ի թիվ ԲԴԽ-19-Ն-7 որոշմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 4 մասնագիտացված դատավորների վերապահվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերը քննելու իրավասություն:

Նոյեմբերի 23-ին ZOOM առցանց հարթակում մեկ տասնյակից ավելի ՔՀԿ-ների, փաստաբանների և ոլորտային փորձագետների հետ կազմակերպված ՖՔԽ-ի ընթացքում որպես խնդրահարույց կարգավորումներ առաձնացվեցին հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների առաջադրվող չափանիշները, դատավորների նշանակման գործընթացում փորձագետներին ներգրավման կարգը և նրանց առաջադրվող չափանիշները, և այլն: Բացի այդ, պարզ չէ, թե կոնկրետ ինչ ընթացակարգերով է ԲԴԽ-ն ընտրել չորս դատավորների, որոնք դիտարկվում են հակակոռուպցիոն մասնագիտացում ունեցող և քննելու են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձնման հետ կապված

քաղաքացիական գործերը: Մտահոգիչ է նաև դատավորների բարեվարքության ստուգման գործընթացը: (Բարեվարքության ուսումնասիրության գործիքի հետ կապված խնդրահարույց կետերը ներկայացված են սույն զեկույցի գործողություն 1-ում:)

Ըստ Հաշվետվության՝ միջոցառման իրականացումը ձգձգող հանգամանք է ՀՀ նախագահի կողմից օրենքների փաթեթի ներկայացումը Սահմանադրական դատարան:

Այսպիսով, գործողությունը, որի կատարումը նախատեսված է 2021 թվականի 4-րդ եռամսյակում, հաշվետու ժամանակահատվածում ձևական առումով գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ (վերապահումով):**

Գործողություն 4: ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
4	ՀՀ Գլխավոր դատախազությունում ստեղծվել է կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչություն:	Գլխավոր դատախազությունում ստեղծվել է կոռուպցիոն գործերով մասնագիտացված ստորաբաժանում Դատախազների կազմի առնվազն 60%-ը նշանակված է ու անցել է համապատասխան վերապատրաստումներ (2021թ.-ի 4-րդ եռամսյակ) Բարձրացվել է վարչության աշխատակիցների մասնագիտացումը:	ՀՀ Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն Արդարադատության ակադեմիա	Ստեղծվել է ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի «ՀՀ դատախազության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի հունիսի 29-ի N 43 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39 հրամանով ստեղծվել և գործում է ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունը:

ՀՀ ԱԺ-ի կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունվել է «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով նախատեսվում է ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծել ՀԿԿ-ի կողմից իրականացվող մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչություն: Այս վարչությունում դատախազների պաշտոններում կարող են նշանակվել օրենքով սահմանված կարգով բարեվարքության ուսումնասիրություն անցած անձինք: (Բարեվարքության ուսումնասիրության գործիքի հետ կապված խնդրահարույց կետերը ներկայացված են սույն զեկույցի գործողություն 1-ում:) Հարկ է նշել, որ 2021 թվականի առաջին կիսամյակի դրությամբ վարչությունը ստեղծված չէ:

Ըստ Հաշվետվության՝ միջոցառման իրականացումը ձգձգող հանգամանք է ՀՀ նախագահի կողմից օրենքների փաթեթի ներկայացումը Սահմանադրական դատարան:

Այսպիսով, գործողությունը, որի կատարումը նախատեսված է 2021 թվականին, հաշվետու ժամանակահատվածում գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 5: Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
5	ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները պարբերաբար վերապատրաստվում են: Իրավասու ստորաբաժանումների գործառույթները հստակ տարանջատված են:	Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների կարողությունները գնահատված են, հակակոռուպցիոն քաղաքականության մշակումը և իրականացումը կատարվում է առավել արդյունավետ և համակարգային: ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների առնվազն 40%-ն անցել	ՀՀ Վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության նախարարություն Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Գնահատվել են ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության կարողությունները: Վարչության աշխատակիցները մասնակցել են թվով 8 միջոցառումների տարբեր թեմաներով:

		է վերապատրաստում: Իրականացվել է տարեկան առնվազն 1 վերապատրաստում ՀԿ-ների ներկայացուցիչների համար:		Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

Ըստ Հաշվետվության՝ գնահատվել են ՀՀ ԱՆ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության կարողությունները: Կարողությունների զարգացման նպատակով վարչության աշխատակիցները մասնակցել են թվով 8 միջոցառումների տարբեր թեմաներով: Նախատեսվում է նաև ՄԱԿ-ի կողմից ներգրավել ազգային փորձագետի, որը կաջակցի ՀՀ ԱՆ-ին՝ հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման ոլորտում կարողությունների ամրապնդման և կատարելագործման գործում:
Ըստ նույն աղբյուրի՝ 2021 թվականի առաջին կիսամյակում ուսումնասիրվել է հակակոռուպցիոն քաղաքականության գործընթացներում ներգրավված ՀԿ-ների կողմից հակակոռուպցիոն կրթությանը միտված ծրագրերը, իրականացվել են հարցումներ կրթական այդ ծրագրերի շրջանակներում ուսումնառող և դասավանդող անձանց վերաբերյալ: ՀԿ-ների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների նախանշումը և իրականացումը նախատեսվում է իրականացնել երկրորդ կիսամյակի ընթացքում:

ՀՀ ԱՆ-ի կողմից իրականացված վերջին գործողությունը, որն ուղղված էր բացահայտել ՀԿ-ների կարողությունների զարգացման ուղղությունները, եղել է 2020 թվականի հունիսի 16-ին, երբ գրությամբ ՀՀ ԱՆ-ը դիմել է ոլորտային ՀԿ-ներին՝ առաջարկելով վերջիններիս իրականացնել իրենց կարողությունների ինքնագնահատում և դրա հիման վրա կարողությունների զարգացմանն ուղղված առաջարկությունները ներկայացնել ՀՀ ԱՆ: Ըստ ԱՆ-ի կողմից նախկինում տրամադրած տեղեկության՝ ԱՆ-ը մշակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացրել առաջարկությունների փաթեթ: Դեռևս 2019-2020 թվականների մշտադիտարկման արդյունքների զեկույցի շրջանակներում պարզվել էր, որ ՔՀԿ-ները այս մասով միայն մեկ գրություն են ստացել ՀՀ ԱՆ-ից այն մասին, թե ինչ կարիքներ ունեն ՀԿ-ները: Դրանից հետո որևէ քննարկում չի կատարվել այդ ՔՀԿ-ների հետ և, փաստացի, վերջնական ամփոփումը կատարվել էր առանց ՔՀԿ-ների մասնակցությամբ: Այդ ամփոփումը ինչպես այն ժամանակ, այժմ ևս չի ներկայացվել ՔՀԿ-ներին:

2021 թվականի նոյեմբերի 23-ին ZOOM առցանց հարթակում մեկ տասնյակից ավելի ՔՀԿ-ների, փաստաբանների և ոլորտային փորձագետների հետ կազմակերպված ՖՔԽ-ի ընթացքում որպես խնդիր մասնակիցները առանձնացրեցին Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անարդյունավետությունը: Մասնավորապես, Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, որպես այդպիսին, շոշափելի միջոցառումներ չի իրականացրել, այդ թվում՝ իր կազմում որակական փոփոխությունների իրականացման ուղղությամբ, ներառյալ՝ ներգրավելով այնպիսի ՔՀԿ-ների, որոնք առաջնային մանդատ ունեն կոռուպցիայի դեմ պայքարում և կարող են խորհրդում ազդել օրակարգային հարցերի նախագծման և

որոշումների կայացման վրա: Հակառակ, անօրինական կերպով ընտրված երեք ՀԿ-ները *(«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, «Իրազեկ քաղաքացիներ միավորում» խորհրդատվական ՀԿ, Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ)*[6] շարունակում են մնալ Խորհրդի կազմում և ընդունել որոշումներ, որոնց լեգիտիմությունը վերջիններիս քվեարկությամբ ապահովված չէ: Մինչ այժմ տարածված պաշտոնական հաղորդագրություններից պարզ է դառնում, որ Խորհրդում ներգրավված ՀԿ-ները որևէ լուրջ ազդեցություն չունեն Խորհրդում ձևավորվող օրակարգային հարցերի վրա:

Այսպիսով, Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը ներկայումս ոչ միայն իր կազմում չի համախմբում հայաստանյան ամբողջ հակակոռուպցիոն ներուժն ու միտքը, որը առաջին հերթին պետք է աներ, այլև՝ առնվազն Խորհրդի երեք անդամ ՔՀԿ-ների մասով, Խորհրդի կազմը ոչ օրինական է և ոչ լեգիտիմ, ինչի պարագայում Խորհրդի գործունեությունը չի կարող լինել ներառական, մասնակցային, օրինական և արդյունավետ: Ավելին, այս տեսանկյունից չի գնահատվել Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար խորհրդակցական մարմին հանդիսացող Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կարողությունները:

Ըստ Հաշվետվության՝ միջոցառման իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ չեն եղել:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 6: Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
6	Յուրաքանչյուր տարի Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդն անց է կացնում 1 նիստ՝ նվիրված հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը:	Իրականացվել է տարեկան առնվազն 1 դոնորների համակարգման նիստ, առկա են նիստերի արձանագրություններ, մամլո հաղորդագրությունները տարածված են. Դոնորների ներգրավվածությունը հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների կատարման գործընթացին	ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Գործողությունը կատարված չէ:

[6] Տե՛ս «Ինչպե՞ս և ովքե՞ր Հայաստանում ձախողեցին հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը» թեմայով լրագրողական հետաքննության Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին վերաբերող հատվածը: Հասանելի է հետևյալ https://iravaban.net/336915.html:

		համամասնորեն բաշխված և համակարգված է:		

Կատարված գրասենյակային հետազոտությունների արդյունքում, պարզ դարձավ, որը 2021 թվականի 1-ին կիսամյակում Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը միայն մեկ նիստ է գումարել (փետրվարի 16-ին), որի ոչ ծավալուն արձանագրությունը հրապարակվել է 2021 թվականի ապրիլի 9-ին:[7] Ըստ հրապարակված պաշտոնական արձանագրության՝[8] նիստը նվիրված չի եղել հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը, այլ ներառել է այլ հարցեր: Ըստ ՀՀ ԱՆ-ի կողմից տրամադրած տեղեկության՝ բովանդակային տեսանկյունից դոնորների համակարգմանն ուղղված աշխատանքները պարբերաբար իրականացվում են ՀՀ արդարադատության նախարարության կողմից:
Այսպիսով, որպես այդպիսին նիստ չի գումարվել, դրանք եղել առանձին և կոլեգիալ հանդիպումներ՝ ուղղված որոշակի շրջանակի հարցերի քննարկմանը:

Հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմը, որը պետք է հանդիսանար Հայաստանում ընթացող հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների միասնական և տեղեկատվական հարթակը, արդյունավետ չի աշխատում: Մասնավորապես՝ պլատֆորմը թարմացված չէ, Հակակոռուպցիոն քաղաքականության նիստերի արձանագրությունների բաժնում վերջինը տեղադրված է 2019 թվականի օգոստոսի 30-ի դրությամբ կայացված նիստի արձանագրությունը:[9] Պլատֆորմի այլ բաժինները նույնպես չեն թարմացվում, և կայքը օգտագործման տեսանկյունից հարմար չէ (user-firendly չէ):[10] Նորություններում առկա չեն ամսաթվեր, որ պարզ լինի, թե երբ է տեղի ունեցել այս կամ այն միջոցառումը, ամսաթվերը գտնելու համար լրացուցիչ ուսումնասիրություն է պահանջվում:[11] Սրա վերաբերյալ ըստ ՀՀ ԱՆ-ի հայտնած տեղեկությունների՝ նոր պլատֆորմի մշակման աշխատանքներ են տարվում, և այն շուտով պատրաստ կլինի. պլատֆորմը հնարավորություն կտա ծանոթանալ հակակոռուպցիոն ռազմավարությանը, հաշվետվություններին, զեկույցներին և այլն, ինչպես նաև հնարավորություն կտա օգտատերերին թողնել իրենց դիտարկումները:

Ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի և ԱՆ-ի կողմից հրապարակած տեղեկությունների՝ համակարգման նիստ տեղի չի ունեցել:

---

[7] https://anti-corruption.gov.am/am/news?content.pid=3
[8] Տե՛ս 2021 թվականի փետրվարի 16-ի արձանագրությունը: Հասանելի է հետևյալ հղմամբ. https://anti-corruption.gov.am/am/news_page?content.cid=130:
[9] Վերջին այցելությունը՝ 2021 թվականի նոյեմբերի 22-ին, https://anti-corruption.gov.am/am/boardinfo:
[10] Տե՛ս օրինակ՝ լուրերի տեղադրման և արխիվի ժամանակագրական հերթականությունը՝ https://anti-corruption.gov.am/am/news:
[11] Տե՛ս օրինակ՝ https://anti-corruption.gov.am/am/news_page?content.cid=124, վերջին այցելությունը՝ 2021 թվականի նոյեմբերի 22-ին:

Ըստ Հաշվեկշռվության՝ միջոցառման ամբողջական ծավալով իրականացումը ձգձգվել է ՀՀ-ում արտակարգ դրության պատճառով:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՉԿԱՏԱՐՎԱԾ**:

ՈԼՈՐՏ 2: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

	2021թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	2
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	2

Գործողություն 7: 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում և իրականացում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
7	Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա, ըստ անհրաժեշտության, 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում մշակվել են հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրեր:	8 համայնքում իրականացվել է գնահատում (2021թ.) 8 համայնքում մշակվել և իրականացվում են հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրեր:	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Գործողությունը կատարված չէ:

Ըստ Հաշվետվության՝ ԿԿՀ-ը միջազգային փորձագետների, մասնավորապես՝ ԱՄՆ ՄԶԳ ծրագրի փորձագետների աջակցությամբ, մշակել և 2020 թվականի մարտի վերջին կազմել է ՏԻՄ-երում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ գնահատման մեթոդաբանությունը: Գնահատման համար որպես առավել ռիսկային ոլորտներ ընտրվել են հետևյալ ոլորտները.

- Պաշտոնի նշանակում, առաջխաղացում, կատարողականի գնահատում. անձնակազմի հավաքագրում, առաջխաղացման, տեղափոխման և գործունեության գնահատման կանոնակարգում:
- Պետական բյուջեի կառավարում. կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրություն՝ կապված ֆինանսական միջոցների կառավարման հետ, ներառյալ գործառնական ծախսերը, ճանապարհածախսերը, նպաստները և ծրագրի ծախսերը:
- Պետական գնումներ. բոլոր ենթակառուցվածքներում գնումների գործընթացի կառավարում՝ նախաձեռնումից մինչև ավարտը:

Ըստ նույն աղբյուրի՝ Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի մարզերում իրականացվել են կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում, որը նպաստել է աշխատանքների առավել թափանցիկ կազմակերպմանը: Նշված է նաև, որ միջոցառման իրականացմանը մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՏԻՄ-երի, ԿԿՀ-ի, ՀՀ ԱՆ, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի ներկայացուցիչները, ինչպես նաև ԱՄՆ ՄԶԳ փորձագետները: **Հարկ է նշել, որ սույն գործողությունների իրականացմանը չի ապահովվել մասնագիտացված քաղաքացիական հասարակության մասնակցությունը: Նաև պարզ չէ, թե ինչպիսի՞ չափորոշիչների հիման վրա է ընտրվում ընդամենը մեկ կառույց: Սա առավել մտահոգիչ է այնպիսի պայմաններում, երբ սույն միջոցառման իրականացման պատասխանատու կառույցներից են նաև ՀԿ-ները:**

2021 թվականի նոյեմբերի 23-ին ZOOM առցանց հարթակում մեկ տասնյակից ավել ՔՀԿ-ների ներկայացուցիչների փաստաբանների և ոլորտային փորձագետների մասնակցությամբ անցկացրած ՖԽՔ-ի ընթացքում մասնակիցները մտահոգություն հայտնեցին առ այն, որ ԱՆ-ը և ԿԿՀ-ը մասնագիտական ՔՀԿ-ների հետ աշխատում են ընտրողաբար՝ ցուցաբերելով տարբերակված և ոչ ներառական մոտեցում: ՖԽՔ-ին մասնակից որևէ ՀԿ-ի հետ մեթոդաբանությունը չի քննարկվել:

Միաժամանակ պետք է նշել, որ վերոգրյալ գործողությունները կատարվել են նախորդ տարի, հետևապես 2021 թվականի առաջին կիսամյակում այս գործողության իրականացման ուղղությամբ աշխատանքներ չեն կատարվել:

Ըստ Հաշվետվության՝ 15000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մի շարք մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանման, ծրագրերի մշակման և իրականացման գործընթացները հետաձգվել են՝ պայմանավորված Հանրապետությունում նոր տիպի կոռոնավիրուսի համաճարակով:

Այսպիսով, գործողությունը, որի կատարումը նախատեսված է 2021 թվականին, հաշվետու ժամանակահատվածում գնահատվում է **ՉԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 8: Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա պետական մարմիններում հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերի մշակում և իրականացում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
8	Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա մշակվել են ոլորտային հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրեր՝ այդ թվում ներառելով նախկինում ընդունված միջոցառումների ծրագրերով սահմանված, բայց դեռևս չկատարված գործողություններ:	Զեկույցների հիման վրա պետական մարմիններում հակակոռուպցիոն՝ այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերը հաստատվել են առնվազն 13 մարմնի կողմից (Նախարարություններ, Վարչապետի աշխատակազմ, նախագահի աշխատակազմ, ԱԺ աշխատակազմ, ՊԵԿ, Կադաստր, Ոստիկանություն):	ՀՀ Վարչապետի աշխատակազմ Պետական կառավարման համակարգի մարմիններ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ	Գործողությունը կատարված չէ:

ԿԿՀ-ը միջազգային փորձագետների, մասնավորապես՝ ԱՄՆ ՄԶԳ ծրագրի փորձագետների աջակցությամբ, մշակել և 2020 թվականի մարտի վերջին կազմել է պետական կառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի համապարփակ գնահատման մեթոդաբանության նախագիծը: Գնահատման համար որպես առավել ռիսկային են սահմանվել հետևյալ ոլորտները.

- պաշտոնի նշանակում, առաջխաղացում, կատարողականի գնահատում. անձնակազմի հավաքագրում, առաջխաղացման, տեղափոխման և գործունեության գնահատման կանոնակարգում,
- պետական բյուջեի կառավարում. կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրություն՝ կապված ֆինանսական միջոցների կառավարման հետ, ներառյալ գործառնական ծախսերը, ճանապարհածախսերը, նպաստները և ծրագրի ծախսերը,
- պետական գնումներ. բոլոր ենթակառուցվածքներում գնումների գործընթացի կառավարում՝ նախաձեռնումից մինչև ավարտը:

Ըստ Հաշվետվության՝ ՀՀ ՊՆ համակարգում կոռուպցիոն դրսևորումների կանխարգելման ծրագրի նախագծի լրամշակված տարբերակը շրջանառվել է ՀՀ ՊՆ համակարգում, ստացվել են առաջարկություններ պատասխանատուների կողմից, դրանք ներառվել են նախագծում և ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարին: Լրամշակված նախագծով ամրագրված միջոցառումների ծրագիրը քննարկել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի և կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ:

2021 թվականի նոյեմբերի 23-ին ZOOM առցանց հարթակում մեկ տասնյակից ավել ՔՀԿ-ների ներկայացուցիչների փաստաբանների և ոլորտային փորձագետների մասնակցությամբ անցկացրած ՖԽՔ-ի ընթացքում մասնակիցների կողմից ներկայացրեց նույն մտահոգությունը, որն նկարագրված է գործողություն 7-ում:
Միաժամանակ պետք է նշել, որ վերոգրյալ գործողությունները կատարվել են նախորդ տարի, հետևապես 2021 թվականի առաջին կիսամյակում այս գործողության իրականացման ուղղությամբ աշխատանքներ չեն կատարվել:

Ըստ Հաշվետվության՝ միջոցառման կատարման ձգձգման պատճառ են հանդիսացել Հակակոռուպցիոն ռազմավարության և փորձագետների մշակած մեթոդաբանության անհամապատասխանությունը:

Այսպիսով, գործողությունը գնահատվում **ՉԿԱՏԱՐՎԱԾ:**

ՈԼՈՐՏ 2.1: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (Բարեվարքություն)

	2021թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	7
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	2[12]
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	5
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	-

[12] 1 գործողության գնահատումը կատարված է վերապահումով:

Գործողություն 9: Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
9	Մշակվել և ՀՀ ԱԺ է ներկայացվել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահվել է նաև «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների և դատավորների թեկնածուների, «Դատախազության մասին» օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց հիման վրա համապատասխան անձանց խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու վերաբերյալ իրավասություն:	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ՀՀ պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ 2021թ.-ին ներկայացրել է առնվազն 20 եզրակացություն, իսկ 2022թ.-ին՝ 40 եզրակացություն	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ Քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Ընդունվել են խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու վերաբերյալ իրավական ակտեր:

2020 թվականի մարտի 25-ին ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծերի փաթեթի շրջանակում ընդունվել է ««ԿԿՀ-ի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով ընդլայնվել են ԿԿՀ-ի գործառույթները, սահմանվել են բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների

իրականացման, դրանց արդյունքներով խորհրդատվական բնույթի եզրակացությունների տրամադրման կարգը: Ընդլայնված գործառույթների շրջանակը ներառում է նաև դատավորների թեկնածուների հավակնորդների, Սահմանադրական դատարանի դատավորների, ԲԴԽ-ի անդամների թեկնածուների, պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, ինչպես նաև օրենքով սահմանված այլ անձանց բարեվարքության ստուգման մեխանիզմները: Բարեվարքության ուսումնասիրությունը ներառում է բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավատության ստուգում, անձի կողմից նախկինում քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքի, այդ թվում՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, նրա կողմից վարքագծի կանոնների պահպանման, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտում կատարած լինելու հանգամանքների ուսումնասիրություն, անձի վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների ուսումնասիրություն, անձի գույքային դրության՝ փաստացի ստացած եկամուտներին համապատասխանության, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրություն, անձի աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն, անձի քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն: 2021 թվականի հունվարի 19-ին ««ԿԿՀ-ի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքով հստակեցվել է ԿԿՀ-ի՝ բարեվարքության ուսումնասիրության իրականացման փուլում անձի քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրության գործիքակազմը:

ԱԺ-ի կողմից 2021 թվականի մարտի 24-ին ընդունվել է «ՀԿԿ-ի մասին» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները (տե՛ս միջոցառում 2-ում), որոնցով սահմանվել են ՀԿԿ-ի ղեկավար կազմի և քննիչների բարեվարքության ստուգման կարգավորումները:

ԱԺ-ի կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունվել է ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների փաթեթը (տե՛ս միջոցառում 3-ում), որով, ի թիվս այլ կարգավորումների, նախատեսվել են դատախազների թեկնածության ցուցակի համալրման փուլում հավակնորդների բարեվարքության ստուգման մեխանիզմները՝ սահմանելով ԿԿՀ-ի իրավասությունը՝ տրամադրելու խորհրդատվական եզրակացություն դատախազների թեկնածության հավակնորդների բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ: Օրենքով սահմանված կարգավորումների համաձայն՝ բարեվարքության ուսումնասիրություն իրականացվում է ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված դատախազների, գլխավոր դատախազի, նրա տեղակալների ընտրության ժամանակ: (Բարեվարքության ուսումնասիրության գործիքի հետ կապված խնդրահարույց կետերը ներկայացված են սույն զեկույցի գործողություն 1-ում:)

Ըստ ԿԿՀ-ի հայտած տեղեկությունների՝ 2021 թվականի առաջին կիսամյակում տրամադրվել է 15 բարեվարքության եզրակացություն, որից միայն 1-ն է եղել բացասական, ևս 1-ի մասով որոշում չի կայացվել ԿՀՀ անդամների ձայների հարաբերակցության պատճառով:[13]

Այսպիսով, գործողությունը ձևական առումով գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ (վերապահումով)**, սակայն բովանդակային առկա են լուրջ խնդիրներ՝ բարեվարքության ուսումնասիրության գործընթացում առկա օրենսդրական թերությունների հիմքով:

Գործողություն 10: «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
10	Իրականացվել են գնահատումներ՝ պարզելու «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքը: Գնահատումների հիման վրա ՀՀ Վարչապետին ներկայացվել է առաջարկությունների փաթեթ, արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում:	Քաղաքացիական ծառայության համակարգի մարմիններում իրականացվել է օրենսդրության կիրարկման գնահատում:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Իրականացվել է քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգումից հետո մրցույթով համալրված պաշտոնների մասնագիտական գիտելիքների և աղբյուրների շրջանակը հավաստող իրավական ակտերի գնահատում:

«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համապատասխան մարմիններում հանրային ծառայության օրենսդրության կիրառման պրակտիկայի և քաղաքացիական ծառայության գործընթացներից բխող այլ հարցերի վերաբերյալ

[13] Տե՛ս ԿԿՀ-ի 2021 թվականի առաջին կիսամյակի ամփոփ հաշվետվությունը, էջ 4: Հասանելի է հետևյալ հղմամբ. http://cpcarmenia.am/files/legislation/544.pdf

ուսումնասիրությունների շրջանակում իրականացրել է քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգումից հետո մրցույթով համալրված պաշտոնների մասնագիտական գիտելիքների և աղբյուրների շրջանակը հավաստող իրավական ակտերի գնահատում:
Ըստ Հաշվետվության՝ հանրային քննարկում չի կազմակերպվել, ՀԿ-ները չեն մասնակցել այս գործընթացին: **Սա առավել մտահոգիչ է այնպիսի պայմաններում, երբ սույն միջոցառման իրականացման պատասխանատու կառույցներից են նաև ՀԿ-ները:**

Այսպիսով, թեև գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**, սակայն այն կատարվել է առանց հանրային սեկտորի մասնակցությամբ:

Գործողություն 11: «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
11	Վերլուծվել և գնահատվել է էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների՝ իրենց գործառույթները գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովման հարցը: Էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար մշակվել են վերապատրաստման ծրագրեր, կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:	Հանձնաժողովներն ու կազմակերպիչներն ունեն իրենց գործունեությունն ապահովող համապատասխան գործիքակազմ (2021թ.):	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)	43 պետական մարմնում նշանակվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչներ: 63 քաղաքացիական ծառայողներ վերապատրատսվել են: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

43 պետական մարմնում նշանակվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչներ, հաստատվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների պաշտոնների անձնագրերը, սահմանվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթները, իրավունքները և պարտականությունները:

2020 թվականի հոկտեմբերի 1-ից գործարկվել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը: Ըստ ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի հայտնած տեղեկությունների՝ մինչև քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի գործարկելը Քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացվել թվով 61 պետական մարմինների կողմից էթիկայի հանձնաժողովների ձևավորման համար անհրաժեշտ թեկնածուների վերաբերյալ ցանկ՝ յուրաքանչյուր մարմնից երկու թեկնածու, իսկ 2020 թվականի հոկտեմբերի 1-ից հետո քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի գործարկումից հետո մարմինները այդ տեղեկատվությունը պետք է ներառեին քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում, և ըստ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ ներբեռնած տվյալների 35 պետական մարմին է ներառել թեկնածուների վերաբերյալ տվյալներ: Բացի այդ, ներկայացվել է տեղեկատվություն՝ նոր չափանիշներով գնահատված և դասակարգված բարեվարքության հարցերով կազմակերպիչների պաշտոնների քանակի մասին, դրանցում ամրագրված գործառույթների, իրավունքների և պարտականությունների մասին, որոնք բխում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի դրույթներից: Հաշվետու ժամանակահատվածում էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուների ցանկում ընդգրկելու գործընթացը շարունակվում է:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանում է ԿԿՀ-ը, իսկ քաղաքացիական ծառայողների վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները՝ քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետը: Հակակոռուպցիոն ռազմավարության 13-րդ կետով հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների **ընդունման** ժամկետ է սահմանվել 2022 թվականը, իսկ **մշակման** ժամկետը՝ 2021 թվականը: Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 756-Ն որոշման N 2 հավելվածի 13-րդ կետով սահմանված է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները սահմանելու մասին» փոխվարչապետի որոշման նախագիծը Կառավարություն է ներկայացվում վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանվելուց մեկ ամիս հետո:

Ըստ Հաշվետվության՝ նկատի ունենալով վերոգրյալ հանգամանքները՝ էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթները գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ ուղեցույցների նախագծերը դեռևս գտնվում են մշակման փուլում: Այս մասով հարկ է նշել, որ ռազմավարությամբ որպես վարքագծի կանոնների ընդունման ժամկետը սահմանված է 2022 թվականը, իսկ դրանց մշակման ժամկետը՝ 2021 թվականն է: **Հետևապես ստացվում է, որ հաշվետու ժամանակահատվածում գործողությունը կատարված չէ:** Ըստ Քաղաքացիական ծառայության գրասենյակի դիտարկման՝ ուղեցույցների նախագծերը դեռևս քննարկման և մշակման փուլում են, հետևաբար սույն գործողությունը չէր կարող կատարվել՝ առանց ԿԿՀ-ի կողմից մշակվող օրինակելի

ուղեցույցների: Ըստ ԿԿՀ տրամադրած տեղեկությունների՝ Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները մշակվել են, իսկ նախագիծն ուղարկվել է ԵԽ՝ խորհրդատվական կարծիք ստանալու համար:

Ինչ վերաբերում է վերապատրաստումներին, ապա 2021 թվականի մարտ ամսին Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար գրասենյակը կազմակերպել և իրականացրել է հակակոռուպցիոն հարցեր և բարեվարքություն թեմայով 6 վերապատրաստում՝ 2-օրյա ժամկետով: Վերապատրաստումներն իրականացվել են առկա եղանակով, որոնց մասնակցել են 63 քաղաքացիական ծառայողներ:

Այսպիսով, գործողությունը, որի կատարումը նախատեսված է 2021 թվականին, հաշվետու ժամանակահատվածում գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 12: Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
12	Իրականացվում են պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխումներին ուղղված միջոցառումները:	2021 թվականի համար վերստուգիչ ցուցանիշ սահմանված չէ:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	Իրականացվել են աշխատանքներ՝ պետական ծառայողների (քաղաքացիական ծառայողների) կատարողականի գնահատման համակարգի բարեփոխումների ուղղությամբ:

Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարելավման ուղղված միջոցառումներ են նախատեսվել ՀՀ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության նախագծում, որը՝ ըստ Հաշվետվության,

քննարկման փուլում է: ՀՀ վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 5-ի «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման գործընթացների կազմակերպման խորհուրդ ստեղծելու և դրա աշխատակարգը հաստատելու մասին» N 1246-Ա որոշմամբ ստեղծվել է Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման գործընթացների կազմակերպման խորհուրդ և հաստատվել դրա աշխատակարգը: Որոշման 2-րդ կետով հանձնարարվել է ՀՀ կառավարության գործունեությունը հանրային կառավարման բարեփոխումների ոլորտում համակարգող ՀՀ փոխվարչապետին՝ հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման աշխատանքների իրականացման նպատակով ձևավորել խորհրդի ներքո գործող աշխատանքային խմբեր՝ մինչև 2019 թվականի սեպտեմբերի 16-ը: Միաժամանակ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության նախագծի ներկայացման համար վերջնաժամկետ է սահմանվել 2019 թվականի դեկտեմբերի 25-ը: Քաղաքացիական ծառայության գրասենյակը մշակել և 2019 թվականի սեպտեմբերին հանրային կառավարման բարեփոխումների ոլորտում համակարգող ՀՀ փոխվարչապետի գրասենյակ է ներկայացրել Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության «Հանրային ծառայություն և մարդկային ռեսուրսների կառավարում» բաժնի՝ «Հանրային ծառայության գրավչության բարձրացում» ենթաբաժնի նախագիծը: Այնուհետև, այն ներկայացվել է Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման գործընթացների կազմակերպման խորհրդի քարտուղարությանը:

2021 թվականին մարտի 1-ին «Աջակցություն Հայաստանում քաղաքացիական ծառայության բարեփոխումների իրականացմանը» ԵՄ Թվինինգ ծրագիրը վերսկսել է իր աշխատանքները, որը դադարեցվել էր Covid-19 համավարակի և 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի պատճառով: Ծրագրի շրջանակում իրականացվում են աշխատանքներ՝ պետական ծառայողների (քաղաքացիական ծառայողների) կատարողականի գնահատման համակարգի բարեփոխումների ուղղությամբ:

Հարկ է նաև նշել, որ վերոնշյալ միջոցառումն ընդգրկում է պետական կառավարման համակարգի լայն շրջանակ և տարբեր ոլորտներում աստիճանաբար իրականացվում են վարձատրության համակարգի բարելավմանն ուղղված աշխատանքեր: Որպես օրինակ, ՀՀ ԱՆ-ն նշում է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի բաղկացուցիչ մաս կազմող մարմիններում բարձր վարձատրության ներդնումը:

Այսպիսով, թեև 2021 թվականի համար գործողության կատարողականի գնահատման նպատակով վերստուգիչ ցուցանիշ սահմանված չէ, բայց համադրելով ակնկալվող արդյունքն ու կատարված գործողությունները, կարող ենք եզրակացնել, որ գործողությունը կատարված է մասնակի:

Ըստ Հաշվետվության՝ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները պայմանավորված են եղել արտակարգ և ռազմական դրությամբ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 13: «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների սահմանում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
13	Մշակվել են հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները:	Իրականացվել է տարեկան առնվազն 2 վերապատրաստում (2021թ.):	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)	Հաշվետու ժամանակահատվածում որևէ վերապատրաստում չի իրականացվել:

Ըստ վերստուգիչ ցուցանիշի՝ 2021 թվականին նախատեսված է իրականացրել առնվազն 2 վերապատրաստում: Ենթադրվում է, որ առնվազն 1-ը պետք է իրականացվեր առաջին կիսամյակում: Հաշվետու ժամանակահատվածում որևէ վերապատրաստում չի իրականացվել: Հիշյալի վերաբերյալ ըստ Քաղաքացիական ծառայության գրասենյակի՝ գործողության սպասվող արդյունք է մատնանշվել հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները և քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները, իսկ վերստուգիչ ցուցանիշ է սահմանվել վերապատրաստումների անցկացումը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից վերապատրաստումների անցկացման նախապայման պետք է լիներ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների և քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների առկայությունը, ուստի սույն գործողությունը չէր կարող ապահովվել առանց այդ կանոնների առկայության:
Ըստ ԿԿՀ տրամադրած տեղեկությունների՝ Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները մշակվել են, իսկ նախագիծը ուղարկվել է ԵԽ՝ խորհրդատվական կարծիք ստանալու համար:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 14: Պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնների սահմանում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
14	Պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնները ընդունվել և գործում են:	Միջազգային փորձի հիման վրա մշակված պատգամավորի,քննիչի վարքագծի կանոնները հաստատվել են (2021 թվականի 1-ին եռամսյակ): Էթիկայի հանձնաժողովի կողմից իրականացվել է տարեկան առնվազն 2 վերապատրաստում (2021թ., 2022թ.):	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ) Քննչական մարմիններ (համաձայնությամբ)	ՀՀ ԱԺ-ի պատգամավորների վարքագծի կանոնները չեն մշակվել: Մշակվել է ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանելու մասին ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանի նախագիծը: ՀՀ ՀՔԾ ծառայողների վերանայված վարքագծի կանոնագիրքը գործում է:

ՀՀ ԱԺ-ի պատգամավորների վարքագծի կանոնները ներկայումս գտնվում են մշակման փուլում, և կատարված աշխատանքները ներկայացվել են միջազգային կազմակերպություններին՝ կարծիքի: ԳՐԵԿՈ-ն՝ իր 2021 թվականի սեպտեմբերի 22-ին հրապարակած Գնահատման չորրորդ փուլի համապատասխանության վերաբերյալ միջանկյալ զեկույցում, որը վերաբերում է կոռուպցիայի կանխարգելմանը պառլամենտի անդամների, դատավորների և դատախազների շրջանում, կոշտ գնահատականներ տվել այս գործողության չկատարման մասով: Մասնավորապես, զեկույցի 77-րդ և 79-րդ կետերով նշել է.

«77. Ինչ վերաբերում է Խորհրդարանի անդամներին, ապա օրենսդրական գործընթացի թափանցիկությունը մնում է առաջնահերթություն՝ շեշտադրելով օրենսդրության մշակման գործընթացում հասարակության ներգրավվածության և «հրատապ ընթացակարգերի» կիրառման անհրաժեշտությունը: Պատգամավորների էթիկայի կանոնների նախագիծը և «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը, որոնցով նախատեսում է մշտադիտարկել պատգամավորների վարքագծի համապատասխանությունը էթիկայի նորմերին, մշակվել է, բայց դեռևս չի ներկայացվել ԳՐԵԿՈ-ին՝ ուսումնասիրության նպատակով:

79. … Խորհրդարանի անդամների, դատավորների և դատախազների մասով նշվում են նվերների վերաբերյալ խստացված դրույթները, սակայն չի հաստատվել, թե արդյո՞ք գործում է թույլատրելի նվերների գրանցման ընթացակարգը:»

ՀՀ ՔԿ-ում ուսումնասիրվել է միջազգային փորձը, որի արդյունքում մշակվել ՀՀ ՔԿ-ի ծառայողի վարքագծի կանոնները սահմանելու մասին ՀՀ ՔԿ-ի նախագահի հրամանի նախագիծը: Նշված հրամանի նախագծով սահմանվում են ՀՀ ՔԿ-ի ծառայողի վարքագծի կանոնները, որոնք ՔԿ-ի ծառայողի վարվելակերպի և փոխհարաբերությունների առանձնահատկությունները կարգավորող նորմեր են՝ ուղղված ապահովելու ՔԿ-ի ծառայողի պատշաճ վարքագիծը, բացառելու հանրային և մասնավոր շահերի բախումը, ամրապնդելու հասարակության վստահությունը ՔԿ-ի նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ ըստ ՀՀ ՔԿ-ի տրամադրած տեղեկությունների՝ քննիչի վարքագծի կանոնները սահմանող և դեռևս 2020 թվականի առաջին եռամսյակում մշակված իրավական ակտը չի ընդունվել, քանի որ այն ներկայացվել ԿԿՀ-ի կարծիքի, սակայն 2021 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ պատասխան գրություն՝ կարծիք չի ներկայացվել:

ՀՀ ՀՔԾ ծառայողների վարքագծի կանոնագիրքը համապատասխանեցվել է «Հանրային ծառայության մասին» օրենքի պահանջներին, ընդունվել և գործում է:

Ըստ Հաշվետվության՝ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները պայմանավորված են եղել արտակարգ և ռազմական դրությամբ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 15: Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
15	Սահմանվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման հստակ չափանիշներ:	Ընդունվել են մրցութային հանձնաժողովների ձևավորման կարգն ու չափանիշները հաստատելու մասին հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը (2021թ.):	ՀՀ Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ Հասարակական կազմակերպություններ (Համաձայնությամբ)	Կազմակերպվել է 2 հեռավար հանդիպում՝ յուրաքանչյուրը մեկ շաբաթ տևողությամբ: Ներկայացվել է առաջարկությունների փաթեթ փորձագետների կողմից:

«Աջակցություն ՀՀ-ում քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի 2-րդ բաղադրիչը վերաբերում է համալրման և ընտրության ուժեղացված համակարգերի համապատասխանությունը պետական կառավարման սկզբունքներին: Ծրագրի շրջանակներում 2021 թվականի ընթացքում կազմակերպվել է 2 հեռավար հանդիպում՝ յուրաքանչյուրը մեկ շաբաթ տևողությամբ: Ներկայացվել է առաջարկությունների փաթեթ փորձագետների կողմից, աշխատանքները ակտիվ քննարկման փուլում են:
Գործողության կատարման ընթացքում հանրային քննարկում չի կազմակերպվել, թեև պատասխանատու կառույցների շարքում են նաև ՀԿ-ները:

Ըստ Հաշվետվության՝ միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները պայմանավորված են եղել արտակարգ և ռազմական դրության ռեժիմի սահմանմամբ, որի պատճառով չորս ամիս ժամկետով կասեցվել էր Թվինինգ ծրագրի փորձագետների հետ աշխատանքը:

Այսպիսով, գործողությունը, որի կատարումը նախատեսված է 2021 թվականին, հաշվետու ժամանակահատվածում գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

ՈԼՈՐՏ 2.2: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

(հայտարարագրում, նվերներ, կարգավորման ազդեցության գնահատում, գնումներ, մասնավոր ոլորտ, իրական սեփականատերեր, տնտեսական մրցակցության պաշտպանություն)

	2021թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	10
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	3
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ	1
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	4
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	2

Գործողություն 16: Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
16	Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության հստակ չափանիշները և շրջանակը սահմանվել է:	Ընդունվել է հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ համապատասխան իրավական ակտ՝ ներառելով ազդեցության գնահատման հստակ չափանիշներ ու շրջանակ (2021թ.):	ՀՀ արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Գործողությունը կատարված չէ:

ՀՀ ԱՆ-ի կողմից 2020 թվականին մշակվել է «Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացման» առաջարկությունների փաթեթը: Կարևորվել է գնահատումն իրականացնող մարմնի մասնագիտացվածությունը և պատրաստվածությունը: Առաջարկությունների փաթեթը շահագրգիռ մարմինների կարծիքների հաշվառմամբ ամփոփվել և 2020 թվականի դեկտեմբերին ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Պետք է նշել, որ վերոգրյալ գործողությունները կատարվել են նախորդ տարի, հետևապես 2021 թվականի առաջին կիսամյակում այս գործողության իրականացման ուղղությամբ աշխատանքներ չեն կատարվել:
Ըստ ՀՀ ԱՆ-ի հայտնած տեղեկությունների՝ սույն միջոցառումը սահմանված ժամկետում չիրականացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում աշխատանքների իրականացմանը ներգրավվել են փորձագետներ, ինչը հնարավորություն կտա մշակել միջազգային լավագույն փորձին ու ստանդարտներին համապատասխանող կարգավորման ազդեցության գնահատման կառուցակարգեր:

Այսպիսով, գործողությունը, որի կատարումը նախատեսված է 2021 թվականին, հաշվետու ժամանակահատվածում գնահատվում է **ՉԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 17: Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում: Ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
17	Ընդունված կարգավորումների շարունակական կիրարկման ապահովում:	Վերանայվել է հայտարարագրերի բովանդակությունը: Ներդրվել է ծախսերի հայտարարագրման ինստիտուտը:	ՀՀ արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Ընդլայնվել է հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը: Ներդրվել է ծախսերի հայտարարագրման ինստիտուտը: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

2021 թվականի հունվարի 19-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է ««Հանրային ծառայության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքների փաթեթը, որով փոփոխվել է գործող հայտարարագրման համակարգը: Օրենքով ընդլայնվել է հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը: Հայտարարագրման պարտականություն է նախատեսվել նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, Երևան համայնքի ավագանու անդամների, ինչպես նաև հարկային, մաքսային ծառայությունների գլխավոր, ԱԺ-ի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձանց համար: Օրենքով ներդրվել է նոր՝ ծախսերի հայտարարագրման ինստիտուտը և սահմանվել են հայտարարագրման ենթակա ծախսերի տեսակները, ծախսերի հայտարարագրման ժամանակ ներկայացվող տեղեկատվությունը և այլն: Օրենքով վերանայվել է գույքի հայտարարագրերի բովանդակությունը: Վերանայվել է թանկարժեք գույքի դրամական շեմը: Սահմանվել է, որ թանկարժեք գույք է հանդիսանում չորս միլիոն ՀՀ դրամը կամ ավելի բարձր արժեք ունեցող ցանկացած գույքը: Ներդրվել է փաստացի տիրապետվող գույքի, հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձի սեփականության իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև այն գույքի հայտարարագրման պահանջ, որից փաստացի օգուտ է ստանում կամ տնօրինում է հայտարարատուն: Կատարվել են այլ փոփոխություններ:

ՀՀ կառավարության կողմից 2021թ. մայիսի 27-ի N 858-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարատուների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի օրինակելի ձևը: ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 306-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Սույն նախագծով նախատեսվում է վերանայել հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերում ներառված՝ հրապարակման ենթակա տվյալների շրջանակը, այդ թվում նաև՝ պաշտոնեական պարտականությունների դադարեցման օրվա դրությամբ կատարված ծախսերի և տարեկան ծախսերի ընդհանուր չափի վերաբերյալ տեղեկատվությունը:

2021 թվականի նոյեմբերի 23-ին ZOOM առցանց հարթակում ԻՀԱ-ն և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան կազմակերպել են ՖԽՔ, որին մասնակցում էին մեկ տասնյակից ավելի ՔՀԿ-ների ներկայացուցիչներ, փաստաբաններ և ոլորտային փորձագետներ: Մասնակիցները, չնայած վերոնշյալ փոփոխությունների, ներկայացրեցին մտահոգություններ օրենսդրական թերի կարգավորումների և դրանից բխող խնդիրների մասին: Այսպես, հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներ են համարվում նրա ամուսինը, անչափահաս զավակը (ներառյալ՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը և հայտարարատու պաշտոնյայի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ: Այս շրջանակից դուրս է մնացել պաշտոնատար անձի հետ համատեղ չբնակվող չափահաս զավակը: Հաշվի առնելով տեղական համատեքստը և պաշտոնյային պատկանող գույքը այլ անձի անունով գրանցելու արատավոր պրակտիկան, ՔՀԿ-ները տևական ժամանակ է առաջարկում են հիշյալ անձանց ևս ներգրավվել հայտարարագիր ներկայացնող անձանց շրջանակում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 18: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
18	Ուսումնասիրության հիման վրա «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է և ներկայացվել ՀՀ ազգային ժողով:	Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցվել են:	ՀՀ արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	Մշակվել է առաջարկությունների փաթեթ: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

ՀՀ ԱՆ-ի 2020 թվականին մշակվել է «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցման վերաբերյալ» առաջարկությունների փաթեթը, որը 2020 թվականի դեկտեմբերի 18-ին ներկայացվել է շահագրգիռ պետական մարմիններ՝ կարծիքի և ստացված դիտարկումների հիման վրա լրամշակված եղանակով ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Հաշվետու ժամանակահատվածում փաթեթը չի ներկայացվել ՀՀ ԱԺ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 19: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում, նվերների ռեեստրի ստեղծում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
19	Նվերների ռեեստրը մշակվել և գործարկվում է:	Ներդրվել է նվերների միասնական ռեեստր:	ՀՀ արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)	Մշակվել է առաջարկությունների փաթեթ: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

ՀՀ ԱՆ-ի կողմից 2020 թվականին մշակվել է «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստրի ստեղծման» առաջարկությունների փաթեթը, որը ներկայացվել է շահագրգիռ պետական մարմիններին և ԵԽ-ին՝ կարծիքի, ինչպես նաև ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Այժմ իրականացվում են ստացված առաջարկությունների ամփոփման աշխատանքները:

Այսպիսով, սույն միջոցառման պարագայում կատարված աշխատանքների, դրանց բնույթի և դրանցով ակնկալվող արդյունքի ուսումնասիրությունից և արդյունքային ցուցանիշների հետ համադրությունից պարզ է դարձել, որ 2021 թվականի առաջին կիսամյակում իրականացված գործողությունները մասնակի են համապատասխանում 2021 թվականի ակնկալվող արդյունքի հետ, քանի որ նվերների ռեեստրը հաշվետու ժամանակահատվածում մշակված չէր, ուստիև՝ չի ներդրվել:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 20: Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման սահմանում, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկության ապահովում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
20	Առաջարկությունների հիման վրա մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել իրավական ակտերի նախագծերի փաթեթ:	ՀՀ-ում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության վերաբերյալ, ինչպես նաև կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկությանն ուղղված վերլուծությունը քննարկվել է Հակակոռուպցիոն խորհրդում (2020թ. 4-րդ եռամսյակ):	ՀՀ արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ Ազգային ժողով (համաձայնությամբ) Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	««Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

2020 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է ««Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Միջազգային փորձի ուսումնասիրության

հիման վրա մշակվել է «Լոբբիստական գործունեության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որի նպատակն է ձևավորել լոբբինգ ինստիտուտը, որը կնպաստի իշխանության և քաղաքացիների կապի ամրացմանը և հնարավորություն կընձեռնի ներկայացնել քաղաքացիների, կազմակերպությունների շահերը հատուկ մարմնի միջոցով: Վերոնշյալ նախագծերի փաթեթը ներկայումս քննարկման փուլում է: Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում քննարկվել են քաղաքական և լրատվական գործունեության ֆինանսավորման թափանցիկության հարցերը և առկա խնդիրները:

ՀՀ ԱՆ-ի կողմից ուսումնասիրվել է ՁԼՄ-ների ֆինանսական թափանցիկությանը միջազգային փորձը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգավորումները: Նշված ուսումնասիրության հիման վրա կազմվել, շահագրգիռ մարմնների ուսումնասիրությանը և ՀՀ վարչապետի աշխատակազմին է ներկայացվել է առաջարկությունների փաթեթը:

Ըստ Հաշվետվության՝ նախագծի պատրաստման գործընթացում մասնակցություն են ունեցել մի շարք պետական հաստատություններ և ՀԿ-ներ:[14] Ուսումնասիրելով ՀԿ-ների ցանկը, նորից պարզ է դառնում, **որ սույն գործողությունների իրականացմանը չի ապահովվել մասնագիտացված քաղաքացիական հասարակության մասնակցությունը և կարծիքների բազմազանությունը: Սա առավել մտահոգիչ է այնպիսի պայմաններում, երբ սույն միջոցառման իրականացման պատասխանատու կառույցներից են նաև ՀԿ-ները:**

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 21: Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցում և դրանցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիքակազմի ներդրում՝ այդ թվում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		

[14] ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1332-ն որոշմամբ 2021 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվություն, միջոցառում 20, էջ 54:

21	Հանրային նշանակության կազմակերպությունների կարգավիճակը հստակեցվել է և ներդրվել է կոռուպցիոն ռիսկերի նվազեցման արդյունավետ գործիքակազմ:	Հանրային նշանակության կազմակերպություններում ընդլայնվել է հակակոռուպցիոն համապատասխանության ներդրման պրակտիկան:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցման նպատակով իրականացվել է օրենսդրական դաշտի ուսումնասիրություն: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցման նպատակով տարվել են օրենսդրական դաշտի ուսումնասիրության և դրանցում առկա խնդիրների վերհանման աշխատանքներ: Խորհրդատվական կազմակերպության կողմից ուսումնասիրվում են ծառայությունների մատուցման բիզնես գործընթացները «այնպես ինչպես կա» և ներկայացվում են առաջարկություններ «ինչպես պետք է լինի»: Նախատեսվում է, որ «ինչպես պետք է լինի» առաջարկները կշրջանառվեն լիազոր մարմինների միջև՝ դիտարկումներ ներկայացնելու նպատակով:

Այսպիսով, սույն միջոցառման պարագայում կատարված աշխատանքների, դրանց բնույթի և դրանցով ակնկալվող արդյունքի ուսումնասիրությունից և արդյունքային ցուցանիշների հետ համադրությունից պարզ է դարձել, որ 2021 թվականի առաջին կիսամյակում իրականացված գործողությունները նվազագույնով են համապատասխանում 2021 թվականի ակնկալվող արդյունքի հետ: Բացի այդ, պարզ չէ, թե վերը նշված «ինչպես պետք է լինի առաջարկները» որքանով են բովանդակային և որակական տեսանկյունից համապատասխանում հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրերին, և ինչպես կարող են դրանք ազդել համապատասխանության ծրագրերի ներդրման պրակտիկայի ընդլայմանը:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 22: Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		

22	Մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջներն ամրագրվել են համապատասխան իրավական ակտերում:	Վերստուգիչ ցուցանիշ 2021թ. համար սահմանված չէ, մասնավոր ոլորտի կազմակերպություններից ստացվել են առնվազն 5 առաջարկներ (2020թ.-ի 3-րդ եռամսյակ):	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Գործողությունը կատարված չէ:

Ուսումնասիրելով ներկայացված հաշվետվությունը, պարզ է դառնում, որ հաշվետու ժամանակահատվածում սույն միջոցառման կատարմանն ուղղված նոր գործողություններ չեն իրականացվել: Արդյունքում, ստացվում է, որ մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջները չեն ամրագրվել համապատասխան իրավական ակտերում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՉԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 23: Գնումների ոլորտի բարելավում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
23	Ուսումնասիրության հիման վրա մշակվել և ընդունվել է նախագծերի փաթեթ՝ ուղղված գնման գործընթացների պարզեցմանը, գնման գործընթացի որոշակիության ապահովմանը:	Իրականացվել է ուսումնասիրություն գնման գործընթացում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման ուղղությամբ (2020թ.-ի 2-րդ եռամսյակ): Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում և տրվել են համապատասխան փոփոխությունների հանձնարարականներ (2020թ.-ի 3-րդ եռամսյակ):	ՀՀ ֆինանսների նախարարություն	Մշակվել են ««Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը:

2020 թվականի դեկտեմբերին Կառավարության քննարկմանն է ներկայացվել ««Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնք գտնվում են լրամշակման փուլում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 24: Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
24	Ճանապարհային քարտեզին համապատասխան՝ տարբեր ոլորտներում շարունակաբար ներդրվում է իրական սեփականատերերի բացահայտման պահանջ:	Քննարկվել և ընդունվել է իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզը (2021թ.-ի 2-րդ եռամսյակ):	ՀՀ արդարադատության նախարարություն Պետական կառավարման համակարգի մարմիններ Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Ընդունվել են օրենքի նախագծեր, որոնցով նախատեսվում է ստեղծել իրավաբանական անձանց իրական շահառուների բաց և հանրամատչելի ռեեստր: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

2020 թվականին մշակվել է և 2021 թվականի հունվարի 18-ին հաստատվել է ՀՀ վարչապետի «Իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» N 30-Ա որոշումը, որով նախանշվել են իրական սեփականատերերի (շահառուների) բացահայտման առաջնային ոլորտները և համապատասխան ժամկետները:
2021 թվականից գործարկվել է Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման էլեկտրոնային համակարգը: 2021 թվականից իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերը ներկայացվում են վերոնշյալ համակարգով:
2020 թվականին մշակվել և 2021 թվականի հունիսի 3-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքները, որոնցով նախատեսվում է ստեղծել

իրավաբանական անձանց իրական շահառուների բաց և հանրամատչելի ռեեստր, նախատեսվում է իրական շահառուների բացահայտման պարտադիր պահանջը տարածել Հայաստանում գործող բոլոր իրավաբանական անձանց նկատմամբ՝ փուլ առ փուլ:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 25: Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
25	Առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակվել են իրավական ակտերի նախագծեր, ներկայացվել ՀՀ Վարչապետի աշխատակազմ:	Ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում և տրվել են համապատասխան փոփոխությունների հանձնարարականներ (2021թ.-ի 3-րդ եռամսյակ):	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ)	Մշակվել են մշակվել են իրավական ակտեր, որոնք ընդունվել են ԱԺ-ի կողմից: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2117-Ա որոշմամբ հավանության է արժանացել և անհետաձգելի կարգով ներկայացվել ԱԺ: Կառավարության կողմից հավանության արժանացած վերոնշյալ նախագծերի փաթեթը, այդ թվում՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը ԱԺ-ի կողմից ընդունվել է 2021 թվականի մարտի 3-ին: Ըստ ՄՊՀ-ի (նախկին անվանումը՝ ՏՄՊՊՀ) հայտնած տեղեկությունների՝ ոլորտի իրավական բարեփոխումների շրջանակում իրականացվել է նաև վերը նշված օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունումը: Միաժամանակ նշենք, որ 2021 թվականի փետրվարի 16-ին կայացած Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստի արձանագրությունից հետևում է, որ նախքան դրանց ընդունումը նախագծերը չեն քննարկվել են խորհրդի նիստում, հետևապես գործողությունն ամբողջությամբ կատարված չէ

Այսպիսով, գործողությունը, որի կատարումը նախատեսված է 2021 թվականին, հաշվետու ժամանակահատվածում գնահատվում է **ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ**:

ՈԼՈՐՏ 2.3: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

(էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրում, պետական կառավարման գործընթացին հասարակության մասնակցության մեխանիզմների ներդրում և կատարելագործում, վարչարարության պարզեցում)

	2021թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	6
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	1[15]
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	3
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	2

[15] 1 գործողության գնահատումը կատարված է վերապահումով:

Գործողություն 26: Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի ներդրում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
26	Վիճակագրական ճկուն գործիքների ներդրման արդյունքում ապահովված է գործադիր իշխանության մարմինների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:	Գործադիր իշխանության թեժ գծի միասնական հարթակը գործարկվում է, որի արդյունքում ստացվել է առնվազն 50 բողոք և հարցում, որոնց առնվազն 50-%-ին տրվել է համապատասխան լուծում:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Գործողությունը կատարված չէ:

Ուսումնասիրվել են ստեղծվելիք հարթակի տեխնիկական հնարավորությունները պետական կառավարման համակարգի մարմիններում ներդնելու և/կամ գործող էլեկտրոնային համակարգերին փոխկապակցելու նպատակով: Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի տեխնիկական նկարագիրը մշակման փուլում է: Առաջարկությունների փաթեթը կկազմվի տեխնիկական նկարագրի հաստատումից հետո:

Ըստ ԷԿԵՆԳ-ի՝ գործում է e-request.am հարթակը, որի միջոցով քաղաքացիները 2021թ-ի ընթացքում ուղարկել են 50-ից ավելի բողոք և հարցում: 2021թ-ի առաջին կիսամյակում հարթակի միջոցով հասանելի մարմինների քանակը կրկնապատկվել է՝ հասնելով 140-ի:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 27: Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
27	Ապահովված է հասարակության լայն շերտերի կողմից պետության իրավաստեղծ գործընթացին մասնակցության հնարավորությունը: Զուգահեռաբար իրականացվում են www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության իրազեկման միջոցառումներ:	Իրականացվել են առնվազն 2 հանրային իրազեկման միջոցառումներ (2021թ.-ի 1-ին եռամսյակ):	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Գործողությունը կատարված չէ:

Ըստ Հաշվետվության՝ www.e-draft.am հարթակի արդիականացման տեխնիկական առաջադրանքը մշակվել և ներկայացվել է դոնոր կազմակերպություններին: Հարթակի արդիականացմամբ նախատեսվում է նաև համակցումը Arlis.am կայքի հետ: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Arlis.am կայքը ևս գտնվում է արդիականացման փուլում, որի աշխատանքներն ավարտին հասցնելուց հետո այն կհամակցվի www.e-draft.am հարթակին: Պետք է նշել, որ սույն աշխատանքները դեռևս իրականացվել էին նախորդ տարի,[16] իսկ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱՆ-ի հայտնած տեղեկությունների համաձայն՝ ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի գործարար միջավայրի բարելավում ծրագրի կողմից 2021 թվականի մայսի 26-ին կազմակերպվել է «e-draft.am առցանց հարթակի առավելություններն ու խնդիրները» թեմայով աշխատանքային կլոր-սեղան քննարկում, որի շրջանակներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դիտողություններ և առաջարկություններ www.e-draft.am հարթակի վերաբերյալ, որոնք նախատեսվում է դիտարկել արդիականացման տեխնիկական առաջադրանքի նախագծի շրջանակներում:

[16] Տե՛ս 2019-2020 թվականների մշտադիտարկման արդյունքների զեկույց, գործողություն 27:

Ըստ Հաշվետվության՝ աշխատանքները կասեցվել են՝ հաշվի առնելով արտակարգ և ռազմական դրությունները:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 28: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
28	Իրականացվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրման միջոցառումներ:	Մշակվել ու առնվազն 3 պետական մարմինների կայքէջերում հրապարակվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ դիմումի լրացման օրինակելի ձևերը (2021թ.-ի 2-րդ եռամսյակ):	ՀՀ Վարչապետի աշխատակազմ Պետական կառավարման համակարգի մարմիններ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)	Երևանում և Գյումրիում գործարկվել են Հանրային ծառայությունների մատուցման միասնական գրասենյակներ, որոնք տրամադրում են համապատասխանաբար 97 և 110 ծառայություններ: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

Պետական ծառայությունների մատուցման որակի բարելավման նպատակով պետական կառավարման համակարգի մարմիններն իրականացրել են մի շարք աշխատանքներ.

- 2020 թվականի հուլիսի 22-ից ՀՀ ԱՆ-ի կողմից գործարկվեց «Հանրային ծառայությունների մատուցման միասնական գրասենյակը», որտեղ քաղաքացիները ոչ միայն կարող են օգտվել ԱՆ-ի հանրային բոլոր ծառայություններից (թվով՝ 97 ծառայություններ), այլ նաև այլ գերատեսչությունների ծառայություններից: Համանման Հանրային ծառայությունների միասնական գրասենյակ սույն թվականի հունիսի 23-ից գործարկվեց նաև Գյումրիում (թվով՝ 110 ծառայություններ):
- 2021 թվականի հունվարի 18-ին ՀՀ ԱԺ-ը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց երկու նոր օրենքներ և ութ օրենքներում փոփոխություններ, որոնց նպատակն է ապահովել ՀՀ ԱՆ-ի հանրային ծառայությունների թվայնացումը, վարչարարության պարզեցումը,

ժամկետների կրճատումը, մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների հարմարավետությունը:

- ՀՀ ԱԳՆ կայքում ստեղծվել է նոր բաժին՝ «COVID-19 համաճարակով պայմանավորված այլ պետություններ մուտքի սահմանափակումների մասին», որը ՀՀ քաղաքացիներին հնարավորություն է տալիս ստանալ թարմ տեղեկություններ՝ բազմաթիվ երկրների կողմից կիրառվող մուտքի-ելքի սահմանափակումների, կիրառվող կարանտինային միջոցառումների մասին: ՀՀ ԱԳՆ, ՀՀ դեսպանությունների և հյուպատոսական հիմնարկների կայքերի «Հյուպատոսական ծառայություն» բաժնում ստեղծվել է նոր բաժին «Վիզայի անհրաժեշտությունը ՀՀ քաղաքացիների համար», որի միջոցով ՀՀ քաղաքացիները կարող են ծանոթանալ, թե կոնկրետ օտարերկրյա պետություն մեկնելու համար մուտքի վիզա պահանջվում է, թե ոչ և եթե այո, ապա ուր պետք է դիմել:
- 25.06.2020թ. ընդունվել է ՀՀ կառավարության թիվ 1065-Ա որոշումը, որով ՀՀ արդարադատության նախարարության տնօրինության տակ գտնվող Երևան քաղաքի Զաքիյան 3 հասցեում գտնվող շենքում տարածք է վերցվել և ամրակցվել ՀՀ ոստիկանությանը՝ քաղաքացիների սպասարկման միասնական կենտրոնում անձնագրային ծառայությունների մատուցման գործառույթների իրականացման նպատակով: Ներկայումս իրականացվում են վերանորոգման աշխատանքներ:
- 2021 թվականի փետրվարի 20-ից մեկնարկել են Իջևան քաղաքում ստեղծված պետական ծառայությունների միասնական կենտրոնի աշխատանքները, որտեղ տեղափոխվել և գործում է նաև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Իջևանի անձնագրային ծառայությունը: Միասնական գրասենյակ է ստեղծվել նաև Գյումրի քաղաքում, սակայն հաշվի առնելով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Մուշի և Կումայրիի անձնագրային ծառայությունների շենքային պայմանները և տեղակայվածությունը՝ «մեկ պատուհան» սկզբունքի կիրառմամբ քաղաքացիներին ծառայություններ մատուցելու հնարավորություններով, հիշյալ գրասենյակում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության աշխատանքները կազմակերպելու համար ստեղծվել է 3 աշխատակիցներից բաղկացած նոր ծառայություն՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Գյումրի քաղաքի «Գյումրիի անձնագրային խումբ»: Արդյունքում՝ Գյումրի քաղաքում գործում են երկու անձնագրային բաժանմունքներ և մեկ անձնագրային խումբ, ինչն իր հերթին նպաստում է աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպմանը, հերթերի նվազեցմանը և ծառայությունների որակի բարձրացմանը:
- 25.06.2020թ. ընդունվել է ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի 1231-ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» թիվ 1052-Ն որոշումը, որով հաստատվել են էլեկտրոնային եղանակով ստացվող տեղեկանքների ձևերը, իսկ նշված տեղեկանքները ստանալու համար ներկայացվող դիմումների ձևերը հաստատվել են ՀՀ ոստիկանության պետի հրամանով: Արդյունքում դիմում ներկայացնելը կազմակերպվում է ավելի արագ և պարզ, քանի որ այն իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

- Ներկայումս աշխատանքներ են տարվում անձանց առցանց եղանակով հանրային ծառայությունների համարանիշի և անձի հաշվառման վերաբերյալ տեղեկանքների տրամադրման համար: Մասնավորապես, ուսումնասիրվում են անձանց նույնացնելու եղանակները, որից հետո հնարավոր կլինի շարունակել հետագա աշխատանքները:
- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը ՔԿԱԳ կողմից տրամադրվել է միասնական տեղեկատվական համակարգից օգտվելու հնարավորություն, ինչի արդյունքում քաղաքացու վերաբերյալ թվայնացված ակտային գրանցումները ստուգվում են նշված համակարգի միջոցով և լրացուցիչ հարցումներ չեն կատարվում: Նշվածը նպաստում է ծառայությունների առավել արագ մատուցմանը և քաղաքացիների սպասարկման որակի բարելավմանը:
- 2021 թվականին ՀՀ ոստիկանության ՃՈ ստորաբաժանումներում կատարված խախտումներին արագ արձագանքելու և քաղաքացիների դժգոհությունները լսելու նպատակով ներդրվել է թեժ գիծ, որը գործում է անխափան:
- ՃՈ տարածքային հաշվառման-քննական ստորաբաժանումներում կուտակումները և քաղաքացիների շրջանում դժգոհություն առաջացնող հերթերը կանոնակարգելու (նաև բացառելու), տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման, վարորդական վկայական ստանալու համար նախատեսված տեսական և գործնական քննություններին մասնակցելու նպատակով ստեղծվել է առցանց հերթագրման ծրագիր, որը գործում է անխափան:
- Քաղաքացիներին առցանց եղանակով տրանսպորտային միջոցների առուվաճառքի պայմանագրեր կնքելու և պետական գրանցման ենթարկելու գործողություններ կատարելու նպատակով ստեղծվել է ծրագիր և պատրաստ է գործարկվելու՝ կառավարության որոշման ուժի մեջ մտնելու պահից:
- ՀՀ տարածքում վայրի կենդանիների տեսակների՝ սոցիալական նպատակներով օգտագործման՝ սիրողական որսի և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի, սիրողական ձկնորսության էլեկտրոնային դիմում-հայտերի օրինակելի ձևերը տեղադրված են Շրջակա միջավայրի նախարարության env.am կայքում:

2021 թվականի նոյեմբերի 23-ին ZOOM առցանց հարթակում մեկ տասնյակից ավելի ՔՀԿ-ների ներկայացուցիչների, փաստաբանների և ոլորտային փորձագետների մասնակցությամբ անցկացրած ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ առկա են խնդիրներ ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության կողմից քաղաքացիների հետ հարաբերությունների:
Առաջին, քաղաքացիների համար մեծ դժվարություն է կապ հաստատել ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության հետ:Տեղեկություններ ստանալու նպատակով քաղաքացիները ստիպված են լինում ֆիզիկապես մոտենալ պարեկային ծառայություն և հերթապահություն իրականացնող ծառայողների օգնությամբ ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկությունները: Քաղաքացիները հնարավորություն և միջոց չունեն հաղորդակցվելու պարեկային ծառայության աշխատակիցների հետ: Ծառայության հեռախոսահամարին պատասխանող չկա: Ինչպես նշեց մասնակիցներից մեկը. *«Անգամ փոքր հարց ունենալու դեպքում ստիպված ես մոտենալ Երևանի ծայրամասում գտնվող ծառայություն և*

հերթապահ բաժնի ծառայողներին խնդրել, որ քեզ ընդառաջեն և կապ հաստատեն այս կամ այն աշխատողի հետ՝ տեղեկություն ստանալու համար»: Այս դժվարությունները առկա են համավարակի պայմաններում, երբ ֆիզիկական ներկայությունն ու շփումները պետք է հասցվեն նվազագույնի, և այս հարցը կարելի է լուծել պարզ հեռախոսային ծառայության կամ թեժ գծի նեդրմամբ: Ըստ ՀՀ ոստիկանության հայտնած տեղեկությունների՝ քաղաքացիների կողմից ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության հետ կապ հաստատելու դժվարությունները կապված են հեռախոսակապի գերծանրաբեռնվածության, ինչպես նաև որոշ տեխնիկական խնդիրների հետ, սակայն քաղաքացիներն իրենց հուզող հարցերով կարող են դիմել ՀՀ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն կամ ՀՀ ոստիկանության թեժ գիծ, որտեղ համանման ընթացակարգով քաղաքացիների խնդիրներին կտրվի լուծում: Երկրորդ, պարեկային ծառայությունը օրենքով սահմանված ժամկետներում վարչական պատասխանատվության ենթարկված անձին չի տրամադրում/ուղարկում վարչական պատասխանատվության ենթարկելու մասին արձանագրությունն ու որոշումը, այն դեպքում, երբ անձը համաձայն չէ այդ որոշման հետ և չի ստորագրում այն:
Երրորդ, քիչ չեն այն դեպքերը, երբ կազմված վարչական ակտերը անընթեռնելի ձեռագրով են գրած, կամ՝ պարեկները չեն նշում հերթապահություն իրականացնող ծառայության բորտի համարը, իրենց ամբողջական անունը և ազգանունը, որը հնարավորություն կտա նույնականացնել վարչական պատասխանտվություն կիրառած անձին: Ըստ ՀՀ ոստիկանության հայտնած տեղեկությունների՝ պարեկային ծառայողի կողմից կազմված բոլոր վարչական արձանագրություններում առնվազն նշվում են ծառայողի պաշտոնը, կոչումը, անվան սկզբնատառը և ազգանունը, ինչպես նաև կրծքանշանի համարը, որոնք բավարար են ծառայողին նույնականացնելու համար:
Չորրորդ, չնայած ՃՈ տարածքային հաշվառման-քննական ստորաբաժանումներում տեղադրված առցանց հերթագրման ծրագրին, ամեն օր, օրվա տարբեր ժամերին քաղաքացիների հերթերը հասնում են մեկ հարյուրից ավել: Այս հերթերը առավել մտահոգիչ են համավարակի պայմաններում: Փաստացի ներդրված համակարգը դեռևս չի լուծել առկա խնդիրները: Բացի այդ, երբ փորձ է կատարվում առցանց հերթագրվել վարորդական վկայականի (իրավունքի) կամ տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման հետ կապված գործողությունների համար, համակարգը չի գրանցում, նշելով, որ *«Ձեր ընտրած ստորաբաժանման ծանրաբեռնվածության պատճառով, հայցելով Ձեր ներողամտությունը, առաջարկում ենք ընտրել հաշվառման-քննական այլ ստորաբաժանում»:* Ստացվում է, որ Երևան քաղաքում բնակվող անձը, ում պետք է շտապ իրականացնել տրանսպորտային միջոցի գրանցում, պետք է հասնի Երևանից դուրս տեղակայված ստորաբաժանումներ: Ըստ ՀՀ ոստիկանության՝ հիշյալը արվում է այն նպատակով, որ խուսափեն հաշվառման-քննական ստորաբաժանումներում հերթերի կուտակումից:

Այսպիսով, գործողությունը թեև տեխնիկապես գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ (վերապահումով)**, սակայն բովանդակային առումով առկա են լուրջ խնդիրներ:

Գործողություն 29: Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացում և e-gov.am-ի շրջանակներում էլեկտրոնային հարթակի ներդրում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
29	Ներդրվել է պետական և համայնքային ծառայությունների միասնական շտեմարան, մատուցվող ծառայությունների վերաբերյալ էլեկտրոնային գնահատման հնարավորություն, ինչպես նաև մատուցվող ծառայությունների վերաբերյալ վիճակագրության միասնական համակարգ:	sso.am էլեկտրոնային գործիքն արդիականացվել է, որի մասին կառավարության կողմից առկա են հրապարակումներ (2021թ.-ի 4-րդ եռամսյակ):	ՀՀ Վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)	Փորձարարական եղանակով գործարկվել է պետական և համայնքային ծառայությունների մատուցման միասնական հարթակը: Անհատ ձեռնարկատեր գրանցելու գործընթացը պատրաստ է և հասանելի թեստային միջավայրում:

Փորձարարական եղանակով գործարկվել է պետական և համայնքային ծառայությունների մատուցման միասնական հարթակը: Անհատ ձեռնարկատեր գրանցելու գործընթացը պատրաստ է և հասանելի թեստային միջավայրում: Հարթակի գործարկմամբ ապահովվելու է մեկ միասնական հարթակի միջոցով ծառայությունների առցանց ստացման հնարավորությունը: Հարթակը հնարավորություն է տալու Ֆիզիկական և իրավաբանական անձանց առցանց դիմել ծառայությունների ստացման համար, հետևել ընթացքին, ստանալ ծառայությունների արդյունքները:

Միաժամանակ հայտնենք, որ ԷԿԵՆԳ-ի տրամադրած տեղեկության համաձայն sso.am հարթակը նախատեսված է միայն ներքին օգտագործման համար՝ հանրային ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների օպերատորների համար, հետևապես հնարավոր չէ գրասենյակային հետազոտությամբ պարզել հարթակում կատարված աշխատանքները:

Այսպիսով, գործողությունը, որի կատարումը նախատեսված է 2021 թվականին, հաշվետու ժամանակահատվածում գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 30: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
30	Տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի տեխնիկական առաջադրանքը մշակված է:	Տեխնիկական առաջադրանքը մշակված է (2021թ.-ի 4-րդ եռամյակ):	ՀՀ Վարչապետի աշխատակազմ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Գործողությունը կատարված չէ:

Ըստ Հաշվետվության՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրությունն իրականացվել է: Նախատեսվում է e-gov.am հարթակում ներկայացնել տեղեկատվություն պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

2019-2020 թվականների մշտադիտարկման արդյունքների զեկույցի շրջանակներում ՀՀ վարչապետի աշխատակազմից տեղեկացրել էին, որ 2021 թվականի առաջին եռամսյակում նախատեսվում է շահագրգիռ կողմերի հետ քննարկել տեխնիկական առաջադրանքը, միջազգային փորձը և տեխնիկական առաջադրանքի վերջնական համաձայնեցված տարբերակը ներկայացնել Թվայնացման խորհրդի քննարկմանը: Սակայն, հաշվետվությունից պարզ դարձավ, որ նման քննարկում տեղի չի ունեցել, ամեն դեպքում այդ մասին տեղեկություններ

հրապարակված չեն: Բացի այդ վերոգրյալ գործողությունները կատարվել են նախորդ տարի, հետևապես 2021 թվականի առաջին կիսամյակում այս գործողության իրականացման ուղղությամբ աշխատանքներ չեն կատարվել:

Ըստ Հաշվետվության՝ COVID-19 Կորոնավիրուսի համավարակով և ռազմական դրությամբ պայմանավորված աշխատանքները ձգձգող ընթացիկ հանգամանքներ առկա եղել են, սակայն դրանք չեն ունեցել նշանակալի ազդեցություն հարթակի ստեղծմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրության աշխատանքների վրա:

Այսպիսով, գործողությունը, որի կատարումը նախատեսված է 2021 թվականի 4-րդ եռամսյակում, հաշվետու ժամանակահատվածում գնահատվում է **ՉԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 31: Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
31	Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված առաջարկությունների ներկայացում և քննարկում Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում:	Մշտադիտարկման առաջարկությունների հիման վրա ձևավորված փաթեթը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ (2021թ.-ի 1-ին եռամսյակ):	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	Գործողությունը կատարված չէ:

««Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը գտնվում է մշակման փուլում: Նախագծով նախատեսվում է վերանայել ազդարարման տեսակները, բացի կոռուպցիոն հանցագործություններից հնարավորություն տրամադրել նաև էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարել կոռուպցիոն բնույթի այլ դեպքերի մասին՝ միաժամանակ համապատասխան մասով հարթակին հասանելիություն տրամադրելով ԿԿՀ-ին: Պետք է նշել, որ վերոգրյալ գործողությունները կատարվել են նախորդ տարի, հետևապես 2021 թվականի առաջին կիսամյակում այս գործողության իրականացման

ուղղությամբ աշխատանքներ չեն կատարվել:[17] Ի լրումն, առաջարկությունները չեն ներկայացվել և քննարկվել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում:[18]

Ըստ Հաշվեքննության՝ միջոցառման իրականացման շրջանակներում խոչընդոտներ չեն եղել:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՉԿԱՏԱՐՎԱԾ**:

[17] Տե՛ս 2019-2020 թվականների մշտադիտարկման արդյունքների զեկույց, գործողություն 31:
[18] Տե՛ս սույն զեկույնի շրջանակներում 6-րդ միջոցառման կատարողականը, որտեղ ներկայացված է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի 2021 թվականի փետրվարի 16-ին նիստի օրակարգն ու արձանագրությունը:

ՈԼՈՐՏ 3: ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

	2021թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	8
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	7[19]
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	1

[19] Սույն աղյուսակում ներառված չէ գործողություն 37-ով կատարված արդյունքը, քանի որ գործողությունը 2021 թվականին նախատեսված միջոռացում չուներ: Մանրամասները տե՛ս գործողություն 37-ում:

Գործողություն 33: ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
33	Կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը, ինչպես նաև վաղեմության ժամկետները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտության վերաբերյալ առաջարկի ներկայացման և ընդունման դեպքում մշակվել է համապատասխան իրավական ակտերի նախագծերի փաթեթ:	Ըստ արդյունքների՝ առաջարկությունները ներառված են ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում (2021թ.):	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ Քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ոստիկանություն	Ընդունվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը, որով վերանայվել են կոռուպցիոն բնույթի որոշ հանցակազմեր՝ համապատասխանեցնելով այն միջազգային չափանիշներին:

Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա, տարբեր միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ «Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի» (ԳՐԵԿՈ) համագործակցության արդյունքում մշակվել և 2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ ԱԺ-ի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը, որով վերանայվել են կոռուպցիոն բնույթի որոշ հանցակազմեր՝ համապատասխանեցնելով այն միջազգային չափանիշներին: Նշված հանցակազմերի շրջանակներում խրախուսական նորմեր առկա չեն:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 34: Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
34	Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկան ներառված է քրեական հետապնդման մարմինների վերապատրաստման ծրագրերում:	Առկա է կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկա):	ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն Արդարադատության ակադեմիա Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Մշակվել և հաստատվել է «Կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության առանձնահատկությունների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» մեթոդական ուղեցույցը:

ՀՀ գլխավոր դատախազը 2021 թվականի մարտի 22-ի N 35 հրամանով հաստատել է «Կոռուպցիոն հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության առանձնահատկությունների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» մեթոդական ուղեցույցը: Ուղեցույցի մեջ վերլուծված են կոռուպցիոն հանցագործությունների էությունը և դրանց կանխարգելման իրավական հիմքերը, կոռուպցիայի հակազդման իրավա-կազմակերպական հիմքերը, կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերը: Առանձին գլխով ներկայացված է ապօրինի հարստացման էությունը, իրավական հիմքերը և առանձնահատկությունները: Ներկայացված են նաև կոռուպցիոն հանցագործությունների գործերով պարզաբանման ենթակա հանգամանքները, կոռուպցիոն հանցագործությունների քննության քրեադատավարական և կրիմինալիստիկական բնութագրերը, այդ թվում նաև՝ կոռուպցիոն հանցագործությունների գործերով կատարվող առանձին քննչական գործողությունների առանձնահատկությունները:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 35: Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
35	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների դրանց քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին վիճակագրության վարման կարգերը հաստատված են: Կոռուպցիոն հանցագործությունների մասին քրեական վիճակագրությունը համալրվել է տեղեկատվության ստացման աղբյուրների և քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով:	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրությունը համալրվել է:	ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ ոստիկանություն	Մշակվել են վիճակագրության վարման կարգերը: Համալրվել է կոռուպցիոն հանցագործությունների մասին քրեական վիճակագրությունը:

ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի և 2020 թվականի հուլիսի 2-ի համապատասխան հրամաններով կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը համալրվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների ու կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով:

ՀՀ Գլխավոր դատախազությունից ստացված կոռուպցիոն հանցագործությունների ցանկին համապատասխան՝ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում մշակվել են կոռուպցիոն հանցագործությունների և դրանք կատարած անձանց հաշվետվությունների ծրագրային բաղադրիչները, որի արդյունքում ստացվում են հաշվետվություններ և տրամադրվում շահագրգիռ ծառայություններին: Հաշվետվությունները յուրաքանչյուր կիսամյակ տրամադրվում են նաև ՀՀ վիճակագրական կոմիտեին և դրանք հրապարակվում են կոմիտեի պաշտոնական կայքում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 36: Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
36	Իրավապահ մարմիններն ունեն էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների այն տեղեկատվական բազաներին հասանելիություն, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն և այլ տնտեսական հանցագործությունների արդյունավետ քննության համար:	Իրավապահ մարմինների կողմից էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների տեղեկատվական բազաներին հասանելիության ապահովման ծրագրային ապահովումը ներդրված է և լիարժեք գործարկվում է մյուս համակարգերի հետ (2021թ.-ի 3-րդ եռամսյակ):	ՀՀ Վարչապետի աշխատակազմ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Ապահովված է իրավապահ մարմինների՝ էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների տեղեկատվական բազաներին հասանելիությունը:

Կառավարության փոխգործելիության հարթակի միջոցով հնարավոր է իրականացնել հարցումներ պետական տվյալների շտեմարաններից (Բնակչության ռեգիստր, Կադաստրի կոմիտե, ՃՈ, ՊԵԿ, Քաղաքացիական կացության ակտերի գրանցմնան գրասենյակ, իրավաբանական անձանց պետական ռեգիստր և այլն): Պետական տվյալների շտեմարաններից ստացվող տեղեկատվության շրջանակն ու ձևաչափերը շարունակաբար ընդլայնվում են:

Այսպես, ՀՔԾ-ն հասանելիություն ունի Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության, Ինֆորմացիոն կենտրոնի, ՃՈ-ի, Ֆինանսական դիտարկումների կենտրոն միասնական տեղեկատվական հարթակի, Իրավաբանական անձանց ռեգիստրի, Անշարժ գույքի կադաստրի, շարժական գույքի նկատմամբ կալանք դնելու վերաբերյալ, Կենտրոնական դեպոզիտարիայի տեղեկատվական բազաներին:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 37: Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի ստեղծում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
37	Առաջարկությունների փաթեթի հիման վրա ստեղծվել է բանկային հաշիվների կենտրոնական ռեեստր:[20]	Բանկային հաշիվների կենտրոնական ռեեստրը ստեղծվել է և գործարկվում է (2020թ.-ի 2-րդ կիսամյակ):	Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	Ընդունվել է ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2020 թվականի ընթացքում ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացված միջազգային փորձի լայնածավալ ուսումնասիրության և դրա հիման վրա ուղարկված հարցումների պատասխանների վերլուծության արդյունքներով մշակվել է «ՀՀ ԿԲ-ի մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի» նախագիծը, որը 2021 թվականի հունիսի 30-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է: Նախագծի ներկայիս տարբերակի հիման վրա մշակվել է նաև Ռեեստրի գործարկմանը վերաբերող ՀՀ ԿԲ-ի խորհրդի որոշման նախագիծը:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ** (սույն գնահատումը ներառված չէ ոլորտի գնահատման ցուցանիշային աղյուսակում (էջ 65), քանի որ այն նախատեսված չէ 2021 թվականի ընթացքում):

Գործողություն 38: Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու	Մշտադիտարկման

[20] Սույն գործողության շրջանակներում 2021 թվականի համար Հակակոռուպցիոն ռազմավարությամբ միջոցառում նախատեսված չէ: Սակայն, նկատի ունենալով, որ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԺ-ն ընդունվել է համապատասխան իրավական ակտը, ուստիև կատարված աշխատանքները ներկայացվում են սույն զեկույցի շրջանակներում:

	2021	2021	մարմին (ներ)	արդյունք
38	ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել կոռուպցիոն գործերով միջազգային համագործակցության իրականացման առկա խոչընդոտների հաղթահարման վերաբերյալ առաջարկներ:	Կազմակերպվել է առնվազն 2 քննարկում համապատասխան շահառուների ներգրավվածությամբ (2021թ.-ի 1-ին եռամսյակ):	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Գործողությունը կատարված չէ:

Միջազգային համագործակցության իրականացման մեխանիզմների և դրանցում առկա խոչընդոտների ուսումնասիրության արդյունքում ՀՀ ԱՆ-ի կողմից մշակվել, շրջանառվել և 2020 թվականի օգոստոսի 3-ին ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Քրեական գործերով իրավական օգնության մասին» օրենքի նախագիծը: Այնուհետև, միջազգային փորձագետներից և շահագրգիռ մարմիններից ստացվել են կարծիքներ, որոնք ամփոփելուց հետո Նախագիծը սահմանված կարգով կրկին կներկայացվի Վարչապետի աշխատակազմ: Պետք է նշել, որ վերոգրյալ գործողությունները կատարվել են նախորդ տարի, հետևապես 2021 թվականի առաջին կիսամյակում այս գործողության իրականացման ուղղությամբ աշխատանքներ չեն կատարվել:[21]

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՉԿԱՏԱՐՎԱԾ:**

Գործողություն 39: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
39	Ստեղծվել և գործարկվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, գույքի կառավարմանը, միջազգային համագործակցությանն ուղղված կառուցակարգեր:	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգեր:	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	ՀՀ գլխավոր դատախազության կազմում ստեղծվել է պատասխանատու ստորաբաժանում:

[21] Տե՛ս նախորդ տարվա մոնիթորինգ, գործողություն 38:

			ՀՀ Կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	4 մասնագիտացված դատավորների վերապահվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերը քննելու իրավասություն: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

ԱԺ-ի կողմից կողմից 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունվել են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին օրենքները: Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով 2020 թվականի սեպտեմբերի 3-ին ՀՀ գլխավոր դատախազության կազմում ստեղծվել է Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը: Վարչությունը գործում է հետևյալ կազմով՝ չորս դատախազ, երկու ավագ դատախազ, վարչության պետի տեղակալ և վարչության պետ, ինչպես նաև հինգ տնտեսագետ և Վարչությանն աջակցող բաժին:

2020 թվականի սեպտեմբերի 3-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում վարչությունը ՀՀ գլխավոր դատախազության այլ ստորաբաժանումներից ստացել է տվյալներ՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության վերաբերյալ ուսումնասիրություն սկսելու հիմքերը ստուգելու և ստուգման արդյունքներով համապատասխան որոշումներ կայացնելու նպատակով: Մասնավորապես, 2020 թվականի ընթացքում ստացված նյութերով կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին թվով 214 որոշում, իսկ 216 անձի դեպքում կայացվել է ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին թվով 83 որոշում: 2021 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կայացվել է ուսումնասիրություն սկսելու թվով 25, ինչպես նաև ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին թվով 11 որոշում:
Ներկայումս վարչության դատախազների կողմից իրականացվում են 239 ուսումնասիրություններ, որոնց շրջանակներում ձեռք են բերվում անհրաժեշտ ապացույցներ՝ համապատասխան հայցադիմումներ դատարան ներկայացնելու նպատակով:
Միևնույն ժամանակ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով մասնագիտացված դատական քննությունն ապահովելու նպատակով ՀՀ ԲԴԽ-ի 2021 թվականի ապրիլի 1-ի թիվ ԲԴԽ-19-Ն-7 որոշմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 4 մասնագիտացված դատավորների վերապահվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերը քննելու իրավասություն: Դատավորների նշանակման գործընթացի հետ կապված մտահոգությունները ներկայացված են սույն զեկույցի գործողություն 3-ում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 40: Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
40	«Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը մշակվել և ՀՀ Ազգային ժողով են ներկայացվել:	«Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը ներկայացվել են Ազգային ժողով (2021թ.-ի 3-րդ եռամսյակ):	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	Ներդրվել է իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտը և համապատասխան կառուցակարգերը:

2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը, որով ներդրվել է իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտը: Նախագծում առանձին ձևով չի սահմանվել այն հանցագործությունների սպառիչ շրջանակը, որոնց սուբյեկտ կարող է լինել նաև իրավաբանական անձը: Բացի այդ, ֆիզիկական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի բացառում նույն հանցագործության համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը: Ֆիզիկական անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հիմք չէ իրավաբանական անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար:
Մշակվել է նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, որը 2021 թվականի հունիսի 30-ին ընդունվել է ՀՀ ԱԺ-ի կողմից: Նախագծով ևս սահմանվել են իրավաբանական անձի պատասխանատվության ինստիտուտի կառուցակարգեր:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 41: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
41	Մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել օրենսդրական փաթեթ՝ ուղղված կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառումը նաև ապօրինի վարձատրություն տալու կամ ստանալու, իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու, իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալու վերաբերյալ գործերով իրականացնելուն:	2021 թվականի համար վերստուգիչ ցուցանիշ սահմանված չէ:	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	Սահմանվել է «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» ՕՀՄ-ի կատարման հնարավորությունը՝ այն կապելով ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված կոնկրետ հանցագործությունների բացահայտման հետ: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

ՀՀ ԱՆ-ի կողմից 2020 թվականին մշակվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու վերաբերյալ» առաջարկությունների փաթեթը, որով կատարվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի հիման վրա կատարվող կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը օպերատիվ-հետախուզական միջոցառման իրավակիրառ պրակտիկան:

Հարկ է նշել, որ 2021 թվականի մայիսի 4-ին ԱԺ-ի կողմից ընդունվել է ՀՀ քրեական օրենսգիրքը, որով վերանայվել է նաև կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը: 2021 թվականի հունիսի 30-ին ԱԺ-ի կողմից ընդունվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը: Նշված օրենսգրքի 251-րդ հոդվածով սահմանվում է «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը» գաղտնի քննչական գործողությունը: Առաջարկությունների փաթեթի և դրա շրջանակում իրավապահ մարմինների կողմից ստացված կարծիքների հաշվառմամբ

սահմանվել է, որ՝ ««կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները սույն օրենսգրքում օգտագործվում են ՀՀ քրեական օրենսգրքի 218-220-րդ, 258-րդ, 272-276-րդ, 435-440- րդ, 477-րդ, 496-497-րդ հոդվածներով սահմանված իմաստով»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված Քրեական դատավարության օրենսգրքով արդեն իսկ սահմանվել է «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը» գաղտնի քննչական գործողության հասկացությունը՝ դրա հաշվառմամբ կիրականացվեն նաև համապատասխան փոփոխություններ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

ՈԼՈՐՏ 4: ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՁԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

	2021թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	6
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	2
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ	2
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	1
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	1

Գործողություն 42: Հանրային իրազեկման տարեկան արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
42	Իրականացված հանրային իրազեկման արշավների հիման վրա անձինք պարբերաբար տեղեկացվում են պետության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմնի հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ:	Հաղորդակցության մասին կիսամյակային հաշվետվությունները ըստ սահմանված ձևաչափի ներկայացվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին ու հրապարակվել են Խորհրդի ու ՀՀ ԱՆ կայքէջերում (2020թ., 2021թ., 2022թ.):	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ Վարչապետի աշխատակազմ Պետական կառավարման համակարգի մարմիններ Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) Զանգվածային լրատվության միջոցներ (համաձայնությամբ)	Գործողությունը կատարված չէ:

ԱՆ-ի կողմից մշակվել է «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2021-2022 թվականների հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ներկայումս լրամշակվում է: Պետք է նշել, որ վերոգրյալ գործողությունը կատարվել է նախորդ տարի, հետևապես 2021 թվականի առաջին կիսամյակում այս գործողության իրականացման ուղղությամբ աշխատանքներ չեն կատարվել:

Ըստ Հաշվետվության՝ 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել են հանրային իրազեկման արշավի աշխատանքներ: Մասնավորապես, ՀՀ ԱՆ-ը շարունակվել է Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման վերաբերյալ տեղեկատվական նյութեր հրապարակել ՀՀ ԱՆ պաշտոնական կայքում, սոցիալական ցանցերում, ՁԼՄ-ներով: Սակայն կատարված գրասենյակային հետազոտությունների արդյունքում և նոյեմբերի 23-ին կայացած ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ ՀՀ ԱՆ կայքում հրապարակված տեղեկությունները հիմնականում կատարված աշխատանքների վերաբերյալ մամուլի հաղորդագրություններ են, և ոչ թե հանրային արշավներ, որոնք հանրամատչելի եղանակով քաղաքացիներին կտեղեկացնեն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմնի հետ հարաբերակցվելիս իրենց

իրավունքների վերաբերյալ: Նկատվում է, որ ԱՆ-ը բավականաչափ չի կարևորում այս հարցը, չունի հստակ ռազմավարություն կամ տեսլական և իր առջև որպես առաջնային նպատակ չի դրել հանրության գիտակցության փոփոխման նպատակ: Դիցուք օրինակ՝ ազդարարման համակարգի վերաբերյալ շարքային քաղաքացուն ոչինչ չասող, նրա գիտակցության փոփոխման վրա չազդող, ոչ հանրամատչելի եղանակով կազմված և տեղադրված արտաքին գովազդային վահանակները:

Ըստ ՀՀ ԱՆ-ի դիտարկումների՝ նախարարությունը, չափազանց կարևորելով կոռուպցիայի՝ որպես երևույթի, դրա տարաբնույթ դրսևորումների վերաբերյալ, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում պետության կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ հանրությանը իրազեկող արդյունավետ կառուցակարգերի ներդնումը, լրամշակում է «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2021-2022 թվականների հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ միջազգային դոնորների առաջարկությունների հաշվառմամբ՝ նման կերպ նպատակ ունենալով ապահովել գործուն ու արդյունավետ գործողությունների ծրագրի ընդունումը, որը նաև պրակտիկայում կստանա կիրառություն՝ ծառայելով իր հետապնդած նպատակներին:

Ըստ Հաշվետվության՝ միջոցառման իրականացմանը խոչընդոտներ չեն եղել:

Այսպիսով, գործողությունը, որի կատարումը նախատեսված է 2021 թվականին, հաշվետու ժամանակահատվածում գնահատվում է **ՉԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 43: «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
43	Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկա:	«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի դասավանդման ծրագրերով իրականացվում է դասավանդում (2020թ.-ի 3-րդ եռամսյակ):	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ԲՈՒՀ-եր Միջին մասնագիտական ուսումնական	5 բուհերում և Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության

			հաստատություններ	հիմունքներ» առարկան: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկա: Բուհերից ստացված ծրագրի 2021 թվականի կիսամյակային հաշվետվությունների համաձայն՝ բուհերը, մասնավորապես՝ Գավառի պետական համալսարանը, Գորիսի պետական համալսարանը, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանը և Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանն իրենց ուսումնական պլաններում որոշակի ժամաքանակով ներառել են «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան, որը կդասավանդվի 2021-2022 ուսումնական տարվանից:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալի գրությամբ՝ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մշակվել և 2020-2021 ուսումնական տարվանից դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» թեմայով պարտադիր ուսումնական ծրագիր՝ «Իրավունքի հիմունքներ» առարկայի շրջանակում:
Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերում մշակվել և իրականացվում է 428 մշակված թեմատիկ առարկայական ծրագրեր՝ «Կոռուպցիայի իրավական բնութագիրը», «Հակակոռուպցիոն քաղաքականությունը», «Հակակոռուպցիոն երևույթի հասկացությունը», «Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ-ում», Կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները», «Հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները և գնահատումները», «Հակակոռուպցիոն ռազմավարության նպատակը և խնդիրները», «Հակակոռուպցիոն ռազմավարական ուղղությունները» և այլ թեմաներով, որոնց ուսանողների թիվը՝ 7127 է:
Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերում մշակվել և իրականացվում են թվով 244 թեմատիկ առարկայական ծրագրեր՝ «Կոռուպցիայի դրսևորումներն ու մակարդակները», «Կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները», «Քրեական դատավարության իրավունք հասկացությունը/խնդիրները և սուբյեկտները, «Դատական քննության փուլերը/վարույթը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում/», «Միջազգային իրավունք», «Հասկացությունը և էությունը» և այլ թեմաներով, որոնց ուսանողների թիվը՝ 2009 է:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 44: Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
44	Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է:	«Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների ներգրավմամբ իրականացվում է դասավանդում (2020թ.-ի 3-րդ եռամսյակ):	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ԲՈՒՀ-եր	Փոփոխվել են Հասարակագիտության առարկայական ծրագրային բացվածքը:

2020 թվականի ընթացքում իրականացվել են հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական ծրագրերի և չափորոշիչների վերանայման աշխատանքները: Հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման շրջանակներում հասարակագիտության առարկայական վերջնարդյունքներում և ծրագրային բացվածքում անդրադարձ է կատարվել հետևյալ թեմաներին.

- Կոռուպցիայի տեսակները, պատճառներն ու հետևանքները (9-րդ դասարան)
- Տնտեսական մրցակցություն, ընտրություններ (ընտրախախտումներ), քաղաքացիական մասնակցություն և վերահսկողության ձևեր (10-րդ դասարան)
- Կոռուպցիայի դեմ պայքարի ձևերն ու դրանց արդյունավետությունը (11-րդ դասարան):

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԵԾԱՄԱՍՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 45: Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության, «Մարդու իրավունքներ» թեմայով

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
45	Անցկացվել են իրազեկվածության բարձրացմանն ուղղված պարբերական	Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերում առկա	ՀՀ Վարչապետի աշխատակազմի	Իրականացվել է հակակոռուպցիոն և

	վերապատրաստումներ, սեմինարներ, միջոցառումներ:	են կոռուպցիայի կանխարգելման, «Մարդու իրավունքներ» թեմաներով դասընթացներ (2020թ.-ի 4-րդ եռամսյակ): 50 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են:	քաղաքացիական ծառայության գրասենյակ ՀՀ արդարադատության նախարարություն Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	բարեվարքություն թեմայով 6 վերապատրաստում՝ 63 քաղաքացիական ծառայողների մասնակցությամբ: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

2021 թվականի մարտ ամսին Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար Քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել և իրականացրել է հակակոռուպցիոն հարցեր և բարեվարքություն թեմայով 6 վերապատրաստում՝ 2-օրյա ժամկետով, որոնց մասնակցել են 63 քաղ. ծառայողներ:

ՏԻՄ-երում նույնպես անց են կացվել վերապատրաստման դասընթացներ: 2021թ. առաջին կիսամյակում Լոռու մարզպետարանի գործունեության թափանցիկության ապահովման նպատակով, ինչպես նաև հանրային իրազեկման աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նկատառումներով մարզային և հանրապետական զանգվածային լրատվամիջոցներով լուսաբանվել են մարզպետարանի աշխատակազմի գործունեությանը վերաբերող իրադարձությունները, նիստերը, հանրային հնչեղության բանակցությունները, խորհրդակցությունները:

Համադրելով ակնկալվող արդյունքներն ու կատարված աշխատանքները, պարզ է դառնում, որ նախատեսված իրազեկվածության բարձրացմանն ուղղված պարբերական սեմինարները և միջոցառումները պարբերաբար չեն կատարվել:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԵԾԱՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ**:

Գործողություն 46: Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
46	Քաղաքացիական ծառայողների ուսուցումը կազմակերպվել է հեռավար ուսուցման մոդելի կիրառմամբ:	Ըստ մոդուլների՝ իրականացվում է ուսուցում (2021թ.-ի 4-րդ եռամսյակ):	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	Գործողության իրականացումը գտնվում է գնումների գործընթացի կազմակերպման ընթացիկ փուլում:

Ըստ Հաշվետվության՝ 2021 թվականի 4-րդ եռամսյակում նախատեսվում է իրականացնել «Բարեվարքություն» թեմայով հեռավար ուսուցում համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայողների համար: Միաժամանակ, ըստ ՀՀ ԱՆ-ի հայտնած տեղեկությունների՝ գործողության ամբողջական իրականացումը գտնվում է գնումների գործընթացի կազմակերպման ընթացիկ փուլում, որի արդյունքում որոշվելու է վերապատրաստումն անցկացնող կազմակերպությունը:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ**: :

Գործողություն 47: Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
47	Գործարկվել է թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման համակարգը և քաղծառայության տեղեկատվական համակարգը:	2021 թվականի համար վերստուգիչ ցուցանիշ սահմանված չէ:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակով իրականացվել է 7 մրցույթի թեստավորում, որից 5-ը հեռարձակվել է:

Ըստ Հաշվետվության՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ից գործարկվել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը, և 2020 թվականի հոկտեմբերի 1-ից պետական մարմիններում թափուր պաշտոնների համալրման մրցույթներն անցկացվում են քաղաքացիական

ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով: Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակման և քաղծառայության տեղեկատվական համակարգերը գործարկելուց հետո 2020 թվականի դեկտեմբերի 21-ին Առողջապահության նախարարության կողմից քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի միջոցով անցկացվել է առաջին մրցույթի թեստավորումը, որը ուղիղ հեռարձակվել է Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջում: Այսպիսով, թեև 2021 թվականի համար գործողության կատարողականի գնահատման նպատակով վերստուգիչ ցուցանիշ սահմանված չէ, բայց համադրելով ակնկալվող արդյունքն ու կատարված գործողությունները, ինչպես նաև նկատի ունենալով, որ վերոգրյալ գործողությունները կատարվել են նախորդ տարի, կարող ենք եզրակացնել, որ հաշվետու ժամանակահատվածում գործողությունը կատարված չէ: Ստացվում է, որ տեղեկատվական հարթակով միայն Առողջապահության նախարարությունն է անցկացրել մրցույթի թեստավորումը: Միաժամանակ, Քաղաքացիական ծառայության գրասենյակի հայտնած տեղեկությունների համաձայն՝ կազմակերպահրավական վարչության կողմից ուսումնասիրվել է և պարզվել է, որ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակով իրականացվել է 7 մրցույթի թեստավորում, որից 5-ը հեռարձակվել է, այսինքն՝ թեստավորման փուլը կայացել է, իսկ 2-ը չի կայացել՝ տարբեր պատճառներով, մասնավորապես՝ մեկը չեղարկվել է, իսկ մյուսը չի կայացել, քանի որ առկա չի եղել թեստավորման մասնակցելու որևէ թույլտվություն:

Այսպիսով, գործողությունը գնահատվում **է ԿԱՏԱՐՎԱԾ:**

ՈԼՈՐՏ 5: ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

	2021թ.
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	1
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾԱՄԱՍԱՄԲ	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ	-
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ	-

Գործողություն 48: Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում

No.	Սպասվող արդյունք	Վերստուգիչ ցուցանիշ	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
	2021	2021		
48	Տարեկան կտրվածքով առնվազն 1 անգամ հասարակության շրջանում, այդ թվում՝ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում, իրականացվող հարցման արդյունքում վեր են հանվել հանրության կարծիքով առավել կոռումպացված ոլորտները, առկա կոռուպցիոն ռիսկերը, ներկայացվել է ՀՀ Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության վերաբերյալ հասարակության կարծիքը, քայլեր են ձեռնարկվել ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:	Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ իրականացվել են 2 հարցումներ, հարցումների արդյունքները հրապարակվել են Խորհրդի ու ՀՀ ԱՆ կայք էջերում (2022թ.-ի 4-րդ եռամսյակ):	ՀՀ Վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության նախարարություն Պետական կառավարման համակարգի մարմիններ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (Համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (Համաձայնությամբ)	Իրականացվել են երկու հանրային հարցումներ: Այլ արդյունքներ ներկայացված են ստորև:

ԵԽ-ի և ՀՀ ԱՆ-ի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ մշակելու կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման միասնական մեթոդաբանությունը և դրա հիման վրա պարբերաբար իրականացնել հարցումներ:

ԱՆ-ը հարցումներն անցկացնում է Միջազգային հանրապետական ինստիտուտ (IRI) միջազգային կազմակերպության հետ համագործակցության միջոցով՝ վերջինիս պատվիրակելով հարցումների անցկացումը: Միջազգային հանրապետական ինստիտուտ միջազգային կազմակերպության կողմից պարբերաբար իրականացվող հանրային հարցումների (Public opinion survey) շրջանակներում 2021 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ևս տրվել են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցադրումներ՝ Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից հարցումներ անցկացնելու նպատակով: Միաժամանակ Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից 2021

թվականի փետրվարին[22] և մայիսին[23] հրապարակված հարցման շրջանակներում ևս ներառվել են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցեր, որոնք ևս առաջարկվել էին ԱՆ-ի կողմից:

ԵԽ երևանյան գրասենյակի «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակներում իրականացվել է հետազոտություն և հրապարակվել է զեկույց «Ազդարարների պաշտպանության ՀՀ օրենսդրությունը և դրա կիրառելիությունը զինված ուժերում՝ զուգահեռներ միջազգային չափորոշիչների և լավագույն փորձի հետ» խորագրով, որում միջազգային և տեղական փորձագետների կողմից վեր են հանվել այն խնդիրները, որոնք խոչընդոտում են զինված ուժերում մարդու իրավունքների և կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ ազդարարմանը: Ազդարարման համակարգերի արդյունավետության խոչընդոտները բացահայտելու նպատակով նշված ծրագրի շրջանակներում ՀՀ ՊՆ 1-ին և 2-րդ ԲԿ ենթակայության զորամասերում իրականացվել էր նաև սոցիոլոգիական հետազոտություն՝ հասկանալու, թե որքանով են զինծառայողները պատրաստ ազդարարել իրենց իրավունքների խախտման կամ այլ չարաշահումների, այդ թվում կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ: Հետազոտության արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են ՀՀ ՊՆ-ի ղեկավարությանը:

Այսպիսով, գործողությունը գնահատվում է **ԿԱՏԱՐՎԱԾ**:

[22] https://www.iri.org/sites/default/files/final_for_publication_armenia_electoral_reform_march_8_2021.pdf
[23] https://www.iri.org/sites/default/files/armenia_ppt_final.pdf

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Կան միջոցառումներ, որոնց համար 2021 թվականի համար նախատեսած են գործողություններ՝ առանց վերստուգիչ ցուցանիշների (օրինակ, տե՛ս գործողություններ 12, 20, 22, 23, 41, 47): Սա հնարավորություն չի տալիս պարզել կոնկրետ ժամանակահատվածում իրականացված գործողության իրական ծավալը և իրական ազդեցությունը: Ըստ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի 2021 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ պետական մարմինների ներկայացրած հաշվետվության (Հաշվետվություն)՝ այս գործողություններից որոշների դեպքում հիմք են ընդունվել նախորդ տարվա վերստուգիչ ցուցիչները: Ընդ որում, նշվածների մեջ կան միջոցառումներ, որոնց գործողությունները նախատեսված են 2021-2022 թվականների համար, բայց Հաշվետվության մեջ որպես կատարողականի գնահատման վերստուգիչ ցուցանիշ հիմք են ընդունվել 2020 թվականի վերստուգիչ ցուցանիշները:

   Առաջարկվում է փոփոխել Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրերը, և բոլոր այն գործողությունները, որոնց համար նախատեսված չեն վերստուգիչ ցուցանիշներ, վերանայել և նախատեսել այդպիսիք՝ հստակ ժամանակահատվածի համար:

2. Որոշ միջոցառումների ներքո իրականացվում են գործողություններ, որոնք սակայն վերստուգիչ ցուցանիշով նախատեսված արդյունքին հասնելու համար նվազ նշանակություն ունեն: Միևնույն ժամանակ, այդ միջոցառումը գնահատվում է որպես «մասնակի կատարված», սակայն իրականում դրանք ավելի քիչ են, քան «մասնակի կատարված» գնահատականը:

   Առաջարկվում է փոփոխել Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրերը, և յուրաքանչյուր գործողության համար նախատեսել որակական, և ոչ թե՝ քանակական արդյունք ապահովող վերստուգիչ ցուցանիշներ:

3. Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրով նախատեսվող գործողությունների մշտադիտարկման ենթակա ինդիկատորները հիմնականում ներառում են ելքային մակարդակի ինդիկատորներ (output level indicators): Այս ինդիկատորները հիմնականում վերաբերում են նրան, թե արդյոք Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրով նախատեսված այս կամ այն գործողությունը կատարվել է, թե՝ ոչ, այնինչ գործողության և ակնկալվող արդյունքի կապի վերաբերյալ ինդիկատորները հիմնականում բացակայում են: Սա ենթադրում է, որ կատարված գործողությունների ազդեցության գնահատում չի իրականացվում և չի գնահատվում, թե արդյոք գործողության կատարումը հանգեցրել է ցանկալի արդյունքին/արդյունքներին: Օրինակ, սույն զեկույցում ներկայացված գործողություններ 1, 2, 3, 21, 43-ի վերլուծություններն ու գնահատականները թույլ են տալիս եզրակացնելու որ այդ ինդիտակորները ամբողջապես հնարավորություն չեն ընձեռում գնահատել կատարված գործողությունների որակական ասպեկտները: Այսպես, 43-րդ միջոցառմամբ նշված է չէ թե քանի բուհում պետք է դասավանդվեն հակակոռուպցիոն թեմաները կամ առնվազն քանի ուսանող պետք է անցնի դասընթացները/թեմաները: Փոխարենը, վերստուգիչ ցուցանիշը ընդհանուր բնույթ ունի, և սրանից կարելի է

մեկնաբանել, որ անգամ մեկ բուհում ուսումնական այդ մոդելի կիրառումը իրավասու մարմինները կարող են գնահատել որպես կատարված, սակայն արդյունքում առաջանում են որակական խնդիրներ:

Առաջարկվում է Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրերի իրականացման արդյունավետության չափման ինդիկատորներ ներառել նաև ազդեցության մակարդակի ինդիկատորներ (impact level indicators), որոնց միջոցով հնարավոր կլինի գնահատել, թե արդյոք իրականացված գործողությունները հանգեցրել են ցանկալի արդյունքներին և ինչպիսի ազդեցություն են ունեցել երկարաժամկետ հատվածում:

4. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների կատարողականը գնահատելու և մշտադիտարկելու նպատակով որոշ վերստուգիչ ցուցանիշների համար հիմք են ընդունվում մեկ աղբյուրից տրված գնահատականները, ցուցիչները, և համեմատականներ չեն կատարվում այլ վստահելի աղբյուրների կողմից տրված արդյունքների, տեղեկությունների հետ:

   Առաջարկվում է վերստուգիչ ցուցանիշների ստուգման նպատակով համադրել մի քանի աղբյուրներից ստրամադրած տեղեկությունները՝ գործողությունների կատարողականը արդյունավետ գնահատելու համար:

5. Առկա է գործողությունների կատարման հաջորդականության խնդիր: Մասնավորապես, գործողություն 13-ով հանրային ծառայողի, քաղաքացիական ծառայողի վարքագծի տիպային կանոնների մշակման ժամկետ է սահմանված 2021 թվականը, իսկ ընդունման ժամկետ՝ 2022 թվականը: Վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ պետք է իրականացվեն քաղաքացիական ծառայողների տարեկան առնվազն 2 վերապատրաստում 2021 թվականին: Ստացվում է, որ վարքագծի տիպային կանոնները, որոնք պետք է ընդունվեն 2022 թվականին, դրանց վերաբերյալ վերապատրաստումներ պետք է կազմակերպվեն 2021 թվականին: Սույն մոնիթորինգի արդյունքները ցույց տվեցին, որ այդ վերապատրաստումները չեն կազմակերպվել, քանի որ որպես այդպիսին վերապատրատսման նյութը՝ վաքագծի տիպային կանոնները դեռևս չեն ընդունվել:

   Նկատի ունենալով, որ վերապատրաստումների իրականացման համար նախատեսված ընթացիկ տարին ավարտվում է, առաջարկվում է այս վերհանված մեթոդական խնդիրը ընդունել ի գիտություն՝ հետագայում նման խնդիրներից խուսափելու նպատակով:

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

1. Բարեվարքության ստուգման վերաբերյալ ԿԿՀ-ի խորհրդատվական եզրակացությունները դարձնել բաց և հասանելի հանրության համար՝ ապահովելով օրենքով նախատեսված անձնական տվյալների գաղտնիությունը՝ հանրամատչելի անձնական տվյալների հաշվառմամբ (ինչպես օրինակ՝ արվում է հայտարարագրերի հրապարակման դեպքում):
2. Բարեվարքության եզրակացությունները նախքան պետական իրավասու մարմիններին ուղարկելը, այն տրամադրել գնահատվող թեկնածուին՝ անհրաժեշտության դեպքում տեղ գտած անճշտությունները պարզաբանելու և վերացնելու նպատակով:
3. Առաջարկվում է իրականացնել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի ձևավորման և կարողությունների իրական գնահատում, վեր հանել ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ ընդգրկված ՀԿ-ների անդամակցության ոչ իրավաչափ հիմքերը և դրանց արդյունքում կայացնել համապատասխան իրավաչափ որոշումներ:
4. Նախքան հակակոռուպցիոն նոր հարթակի գործարկումը, ապահովել Հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմի անխափան աշխատանքը:
5. Ընդունել հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններ և քաղաքացիական ծառայողների, խորհրդարանի անդամների և քննիչների վարքագծի կանոններ:
6. Ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձանց «ընտանիք» եզրույթի շրջանակը՝ նախատեսելով պաշտոնատար անձի հետ համատեղ չբնակվող չափահաս զավակին:
7. Վերապատրաստել հիմնական շահագրգիռ կողմերի (քաղաքականություն մշակողներ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, գիտական հաստատություններ, լրատվամիջոցներ, պետական պատվիրատուներ, բիզնեսներ) ներկայացուցիչներին հակակոռուպցիոն և բարեվարքության թեմաներով՝ նպաստելով վերջիններիս կարողությունների ուժեղացմանը:
8. Շարունակաբար բարելավել ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը, այդ թվում՝ նվազեցնել տարածքային հաշվառման-քննական ստորաբաժանումներում քաղաքացիների կուտակումները և քաղաքացիների շրջանում դժգոհություն առաջացնող հերթերը, օրենքով նախատեսված ժամկետներում տրամադրել քաղաքացիներին իրենց վերաբերյալ կայացրած վարչական ակտերը և արձանագրությունները, ապահովել պարեկային ծառայության հեռախոսային ծառայության անխափան աշխատանքը:

9. Վերանայել Հակակոռուպցիոն ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը՝ ըստ սույն զեկույցում ներկայացված մեթոդական և բովանդակային առաջարկների, ինչպես նաև՝ Արցախյան 2020 թվականի պատերազմի հետևանքով Հայաստանում ստեղծված իրավիճակի և առաջացած մարտահրավերների լույսի ներքո:
10. Ապահովել տարբեր գործողությունների և օրենսդրական ակտերի ընդունման գործընթացում հանրային քննարկումների մասնակցային կազմակերպումը, ներգրավել ոլորտային անկախ և մասնագիտացված կառույցների, և չսահմանափակվել միայն e-draft.am կայքում իրավական ակտերի նախագծերի հրապարակումով: